

2085


Հ. Բ. ԼՆԵՐՆ

ՍՈՑԻԱԼԻՉՄՆ  
ՈՒ  
ԿՐՈՆԸ

3K23

U-78

ՎՈՐՈՇՐՈՍ • 1937 • ԵՐԵՎԱՆ



1 DEC 2009

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՑԵՐԿԻՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՎ

14 NOV 2009

0 2 JUN 2005

ՅԿԶՅ

Ս-78

պ.

Վ. Ի. ԼԵՆԻՆ

ՍՈՑԻԱԼԻԶՄՆ ՈՒ  
ԿՐՈՆԸ

12 FEB 2014

2085

# ՍՈՑԻԱԼԻԶՄՆ ՈՒ ԿՐՈՆԸ



327  
38

В. И. ЛЕНИН  
«СОЦИАЛИЗМ И РЕЛИГИЯ»  
Армпартиздат, Ереван, 1937

Ժամանակակից հասարակությունն ամբողջովին կառուցված է բանվորական ահագին մասսաների շահագործման վրա՝ բնակչության այն չնչին փոքրամասնության կողմից, վոր հողատերերի ու կապիտալիստների դասակարգերին և պատկանում: Այդ հասարակությունն ստրկատիրական հասարակություն է, վորովհետև «ազատ» բանվորները, վորոնք մինչև իրենց կյանքի վերջը կապիտալի համար են աշխատում, «իրավունք ունեն» միայն այնպիսի զոյամիջոցների, վորոնք անհրաժեշտ են շահույթ արտադրող ստրուկներին ապրեցնելու համար, կապիտալիստական ստրկությունն ապահովելու և հավերժացնելու համար:

Բանվորների տնտեսական ճնշումն անփուսափելիորեն առաջ է բերում և ծնում է մասսաների ամեն տեսակի քաղաքական ճնշում, սոցիալական նվաստացում, նրանց հոգեկան ու բարոյական կյանքի կոպտացում ու մթազնում: Բանվորները կարող են իրենց համար փոքրիշատե քաղաքական ազատություն ձեռք բերել [պայքարելու համար] հանուն իրենց անտեսական ազատագրման, սակայն վոչ մի ազատություն նրանց չի կարող փրկել աղքատությունից, գործազրկություն-

նից ու ճնշումից, մինչև վոր՝ կապիտալի իշխանութ-  
յունը չապալավի: Կրոնը հոգևոր ճնշման մի տեսակն  
է, վորն ամենուրեք և ամեն տեղ ծանրացած է ժո-  
ղովրդական մասսաների վրա, վորոնք ճգմված են ու-  
րիշների համար հավիտենական աշխատանք կատարե-  
լուց, կարիքից ու մենակությունից: Շահագործողնե-  
րի դեմ մղած պայքարում շահագործվողների անդո-  
րությունը նույնպես անխուսափելիորեն հավատ է  
ծնում դեպի հանդերձյալ լավագույն կյանքը, ինչպես  
բնության դեմ մղվող պայքարի մեջ վայրենու անդո-  
րությունը հավատ է ծնում դեպի աստվածները, սա-  
տանաները, հրաշքներն ու այլ բաները: Ով մինչև  
կյանքի վերջն աշխատում ու կարիքի մեջ է լինում,  
կրոնը նրան յերկրային կյանքում հեզություն է համ-  
բերություն է ուսուցանում, մխիթարելով նրան յերկ-  
նային պարգևի հուսով: Իսկ նրանց, ովքեր ուրիշի  
աշխատանքով են ապրում, կրոնը յերկրային կյան-  
քում բարեգործություն է ուսուցանում, առաջարկե-  
լով նրանց արդարանալու շատ եժան միջոց՝ իրենց  
շահագործողական ամբողջ գոյության համար ու յերկ-  
նային բարեկեցության տոմսեր ծախելով ձեռնտու  
գնով: Կրոնը ժողովրդի ոպիումն է: Կրոնը հոգևոր  
ողու մի տեսակն է, վորի մեջ կապիտալի ստրուկները  
խեղդում են իրենց մարդկային պատկերը, փոքրիշա-  
տե մարդավայել ապրելու իրենց պահանջը:

Բայց իր ստրկությունը գիտակցած և իր ազա-  
տության համար պայքարի յերած ստրուկը կխտվ  
չափ արդեն դադարում է ստրուկ լինելուց: Արդի գի-  
տակից բանվորը, վորը գործարանային խոշոր արդյու-  
նաբերության մեջ է դաստիարակված ու լուսավոր-  
ված է քաղաքի կյանքով, արհամարհանքով հետ է

շարտում իրենից կրոնական նախապաշարումները, յեր-  
կինքը թողնում է տերտերներին ու բուրժուական  
կեղծ բարեպաշտներին, իրեն համար լավագույն կյանք  
նվածելով այստեղ, յերկրի վրա: Ժամանակակից պրո-  
լետարիատն անցնում է սոցիալիզմի կողմը, վորը կրո-  
նական մշուշի դեմ մղվող պայքարին մասնակից է  
դարձնում գիտությունը և ազատագրում է բանվորին  
դեպի հանդերձյալ կյանքն ունեցած հավատից՝ միա-  
ձուլելով նրան հանուն յերկրային լավագույն կյանքի  
խսկական պայքար մղելու համար:

Կրոնը պետք է հայտարարվի մասնավոր գործ,  
ահա այս բառերով է սովորաբար ընդունված արտա-  
հայտել սոցիալիստների վերաբերմունքը դեպի կրոնը:  
Բայց այս բառերի նշանակությունը պետք է ճշգրիտ  
վորոշել, վորպեսզի դրանք վոչ մի թյուրիմացություն  
չառաջացնեն: Մենք պահանջում ենք, վոր կրոնը մաս-  
նավոր գործ լինի պետության նկատմամբ, բայց մեր  
սեփական կուսակցության նկատմամբ կրոնը վոչ մի  
կերպ մասնավոր գործ համարել չենք կարող: Պետու-  
թյունը կրոնի հետ գործ չպետք է ունենա, կրոնական  
ընկերությունները պետական իշխանության հետ կապ  
չպիտի ունենան: Ամեն վոք բոլորովին ազատ պետք  
է լինի դավանելու իր ցանկացած կրոնը, կամ վոչ մի  
կրոն չճանաչելու, այսինքն՝ լինելու աթեիստ, ինչ-  
պես սովորաբար լինում է ամեն մի սոցիալիստ: Քա-  
ղաքացիների մեջ իրավունքների վոչ մի տարբերու-  
թյուն թույլատրելի չէ կրոնական հավատալիքների  
կապակցությամբ: Քաղաքացիների այս կամ այն դա-  
վանանքի մասին պաշտոնական փաստաթղթերում ամեն  
մի հիշատակություն անգամ պետք է անպայման  
վերացվի: Վոչ մի վճարում չպիտի լինի պետական

յեկեղեցուն, պետական գումարները վոչ մի վճարում չպիտի լինի յեկեղեցական ու կրոնական ընկերություններին, վորոնք միանգամայն ազատ և իշխանությունից անկախ՝ համախոհ քաղաքացիների միություն պիտի լինեն: Այս պահանջների լրիվ կատարումով միայն կարելի յե վերջ տալ այն անիծված ու ամոթալի անցյալին, յերբ յեկեղեցին ճորտական կախման մեջ եր պետությունից, իսկ ոռւս քաղաքացիները ճորտական կախման մեջ եյին պետական յեկեղեցուց, յերբ գոյություն ունեյին և գործադրվում եյին միջնադարյան ինկվիզիտորական որենքները (վորոնք մինչև որս ել մնում են քրեական որենազրքերի ու կանոնադրությունների մեջ), վորոնք հետապնդում եյին հավատի կամ անհավատության համար, բռնություն եյին գործ դնում մարդու խղճի վրա, պետական պաշտոններն ու պետական յեկամուտները կապում եյին պետական-յեկեղեցական այս կամ այն ողին բաժանելու հետ: Յեկեղեցու կատարյալ բաժանում պետությունից, անհավասիկ այն պահանջը, վոր սոցիալիստական պրոլետարիատն առաջադրում ե ժամանակակից պետությանն ու ժամանակակից յեկեղեցուն:

Ռուսական հեղափոխությունը պետք ե իրականացնի այս պահանջը, վորպես քաղաքական ազատության անհրաժեշտ բաղկացուցիչ մաս: Ռուսական հեղափոխությունն այս տեսակետից առանձնապես նպաստավոր պայմաններում ե գտնվում, քանի վոր քաղաքական-ճորտատիրական ինքնակալության զգվելի կազմող շինան անբավականություն, վրդովմունք ու խմորում ե առաջ բերել նույնիսկ հոգևորականության մեջ: Վորքան ել ճգմված, վորքան ել խավար եր ոռւս ուղղափառ հոգևորականությունը, Ռուսաստանի հին,

միջնադարյան հասարակակարգի անկման վորոտը նույնիսկ նրան արթնացրեց այժմ: Նույնիսկ նա հարում ե ազատության պահանջին, բողոքում ե կազմող շինայի ու շինողի կողմից կամայականության, վոստիկանական հետապնդման դեմ, վոր գոռով փաթաթել են «աստծու սպասավորների» վզին: Մենք, սոցիալիստներս, պետք ե պաշտպանենք այս շարժումը, մինչև վերջը հասցնելով ազնիվ ու անկեղծ հոգևորականների պահանջները, խոսքի մեջ բռնելով նրանց այն ժամանակ, յերբ ազատության մասին են խոսում, պահանջելով նրանցից, վոր վճռականապես խզեն բոլոր կապերը կրոնի ու վոստիկանության միջև: Կամ դուք անկեղծ եք, ապա ուրեմն դուք յեկեղեցին պետությունից և դարձրոց յեկեղեցուց կատարելապես բաժանելու, կրոնը լիակատար կերպով ու միանգամայն մասնավոր գործ հայտարարելու կողմը պետք ե լինեք. կամ դուք չեք ընդունում ազատության այս հետևողական պահանջները, ապա ուրեմն այդ նշանակում ե, վոր դուք դեռևս ինկվիզիցիայի տրադիցիաների գերին եք, ապա ուրեմն այդ նշանակում ե, վոր դուք դեռևս պոկ չեք գալիս արքունական պաշտոններից և արքունական հասույթներից, ապա ուրեմն դուք չեք վստահում ձեր զենքի հոգևոր ուժին, դուք շարունակում եք կաշառք վերցնել պետական իշխանությունից, — այդ դեպքում ամբողջ Ռուսաստանի գիտակից բանվորներն անողորմ կռիվ են հայտարարում ձեզ:

Սոցիալիստական պրոլետարիատի կուսակցության նկատմամբ կրոնը մասնավոր գործ չե: Մեր կուսակցությունը բանվոր դասակարգի ազատագրման գիտակից, առաջավոր մարտիկների մի միություն ե: Այսպիսի մի միություն չի կարող ու չպետք ե անտարբեր

լինի դեպի անգիտակցականութիւնը, դեպի խավարը կամ խավարամոլութիւնը, ինչպէս կրօնական հավատալիքներն են: Մենք յեկեղեցու և պետութեան կատարյալ անջատումն ենք պահանջում, վորպեսզի պայքարենք կրօնական մշտնջի դեմ զուտ գաղափարական ու միմիայն գաղափարական ղենքով, մեր մամուլով, մեր խոսքի միջոցով: Բայց մենք հիմնել ենք մեր միութիւնը՝ ՌՄԻԲԿ, վոր, ի միջի այլոց, հենց այդպիսի պայքար մղենք բանվորներին կրօնական հիմարութեան մեջ զցելու ամեն մի փորձի դեմ: Իսկ գաղափարական պայքարը մեզ համար վնչ թե մասնավոր, այլ համակուսակցական, համապրոլետարական մի գործ է:

Յեթն այդպէս է, ապա ինչո՞ւ չենք հայտարարում մեր ծրագրում, թե մենք աթեիստներ ենք, ինչո՞ւ չենք արգելում քրիստոնյաներին ու աստծուն հավատացողներին մոնել մեր կուսակցութեան մեջ:

Այս հարցի պատասխանը պետք է պարզաբանել այն շատ կարևոր տարբերութիւնը, վոր գոյութիւն ունի կրօնի հարցի՝ բուրժուական-դեմոկրատական ու սոցիալ-դեմոկրատական դրման մեջ:

Մեր ծրագիրն ամբողջովին կառուցված է գիտական և այն ել հատկապէս՝ մատերիալիստական աշխարհայեցողութեան վրա: Ուստի և մեր ծրագրի պարզաբանումն անհրաժեշտորեն իր մեջ պարունակում է նաև կրօնական մշտնջի իսկական պատմական ու տնտեսական արմատների պարզաբանումը: Մեր պրոպագանդան անհրաժեշտորեն իր մեջ պարունակում է նաև աթեիզմի պրոպագանդան, համապատասխան գիտական գրականութեան հրատարակումը, վոր մինչև այժմ խստիվ արգելում ու հետապնդում էր ինքնակալա-

կան-ճորտատիրական պետական իշխանութիւնը, ներկայումս մեր կուսակցական աշխատանքի ճյուղերից մեկը պետք է դառնա: Մենք այժմ պետք է հավանորեն հետևենք այն խորհրդին, վոր մի անգամ ենգելը տվել է գերմանական սոցիալիստներին, այն է՝ թարգմանել և մասսայականորեն տարածել XVIII դարի Ֆրանսական լուսավորական ու աթեիստական գրականութիւնը:

Բայց միաժամանակ մենք վոչ մի դեպքում չպետք է թեքվենք դեպի կրօնական հարցի արստրակտ, իդեալիստական «բանականական» դրվածքը, դասակարգային պայքարից դուրս,—մի հարցադրում, վոր շատ անգամ առաջարկվում է բուրժուական ռադիկալ դեմոկրատիայի կողմից: Անհեթեթութիւն կլիներ կարծել, վոր զուտ քարոզչական ճանապարհով կարելի յե կրօնական նախապաշարումները վերացնել այն հասարակութեան մեջ, վոր բանվորական մասսաների անվերջ ճնշման ու կոպտացման վրա յե հիմնված: Բուրժուական սահմանափակութիւն կլիներ մոռանալ այն, վոր կրօնի ճնշումը մարդկութեան վրա՝ հասարակութեան ներսում գոյութիւն ունեցող տնտեսական ճնշման արգասիքն ու անդրադարձումն է միայն: Վոչ մի գրքույկ ու վոչ մի քարոզ չի կարող լուսավորել պրոլետարիատին, յեթե նրան չլուսավորի իր սեփական պայքարն ընդդեմ կապիտալիզմի մութ ուժերի: Յերկրի վրա դրախտ ստեղծելու համար մղվող՝ ճնշված դասակարգի այդ իրոք հեղափոխական պայքարի միասնականութիւնն ավելի կարևոր է մեզ համար, քան յերկնային դրախտի մասին պրոլետարների ունեցած կարծիքի միասնականութիւնը:

Ահա թե ինչու մեր ծրագրի մեջ մենք չենք հայ-



տարարում ու չպետք է հայտարարենք մեր ակթեիզմը: Ահա թե ինչու մենք չենք արգելում ու չպետք է արգելենք հին նախապաշարունակների այս կամ այն մնացորդները պահպանած պրոլետարների մերձեցումը մեր կուսակցութեանը: Գիտական աշխարհայացք մենք միշտ ել կքարոզենք. վորևէ կարգի «քրիստոնյաների» անհետողականութեան դեմ պայքարելն անհրաժեշտ է մեզ. սակայն այս ամեններն չի նշանակում, թե պետք է կրոնական հարցին ամեններն իրեն չպատկանող առաջին տեղը տալ, թե պետք է թույլ տանք իսկական հեղափոխական, տնտեսական ու քաղաքական պայքարի ուժերի մասնատումը՝ հանուն յերրորդական կարծիքների ու զառանցանքների, վորոնք արագ կորցնում են ամեն տեսակի քաղաքական նշանակություն և վորոնք հենց տնտեսական զարգացման ընթացքով արագ կերպով անպետք հնոտիների մառանն են նետվում:

Ռեակցիոն բուրժուազիան ամենուրեք հոգում էր և մեզ մոտ ել այժմ սկսում է հոգալ կրոնական թշնամություն հրահրելու, մասսաների ուշադրությունը տնտեսական ու քաղաքական իսկապես կարևոր ու արժատական հարցերից դեպի այդ կողմը դարձնելու, այն հարցերից, վոր այժմ իր հեղափոխական պայքարի ընթացքում վճռում է գործնականորեն համախըմբվող համառոտական պրոլետարիատը: Պրոլետարական ուժերը մասնատելու ռեակցիոն այդ քաղաքականությունը, վոր այսօր արտահայտվում է գլխավորապես սև-հարյուրյակային ջարդերով, վաղը թերևս վորևէ տեսակի ավելի նուրբ ռեֆորմներ հնարի: Մենք, համենայն դեպս, այդ բանին կհակադրենք հանգիստ, տոկուն ու համբերատար, ամեն տեսակ յերկրորդական տարածայնություններ հրահրելուն խորթ՝ պրո-

լետարական համերաշխութեան ու գիտական աշխարհայացքի քարոզը:

Հեղափոխական պրոլետարիատը կհասնի այն բանին, վոր կրոնը պետութեան համար իսկապես մասնավոր գործ կդառնա: Յեվ միջնադարյան բորբոսից մաքրված քաղաքական այդ կարգերում, տնտեսական ստրկությունը, մարդկութեան կրոնական հիմարացման իսկական աղբյուրը, վերացնելու համար՝ պրոլետարիատը բացահայտ և լայն պայքար է մղելու:

«Новая жизнь», № 28, 16 (3) դեկտեմբերի 1905 թ.  
Ստորագրություն՝ Ն. Լեւին

Տպագրվում է ըստ Յերկերի ուսուցիչն 3-րդ հրատարակութեան VIII հ. տեքստի, էջ 419—423:

# ԲԱՆՎՈՐՂԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐՂ- ԲԵՐՄՈՒՆՔԸ ԴԵՊՒ ԿՐՈՆԸ

Սինոդի նախահաշիվը քննելիս Պետական Դուռա-  
յում պատգամավոր Սուրկովի արտասանած ճառը և  
ճառի նախագծի քննարկման ժամանակ տեղի ունեցած  
այն վիճաբանությունները Դուռայի մեր Փրակցիա-  
յում, վոր մենք բերում ենք ստորև, հենց ներկայիս  
համար չափազանց կարևոր ու հրատապ մի հարց բարձ-  
րացրին<sup>1</sup>: Հետաքրքրություն դեպի այն ամենը, ինչ  
վոր կրոնի հետ կապ ունի, ներկայումս անշուշտ «հա-  
սարակության» լայն շրջաններ և ընդգրկել ու թա-  
փանցել բանվորական շարժմանը մոտիկ ինտելիգեն-

<sup>1</sup> Պետական III Դուռայի 1909 թ. ապրիլի 27 (14)-ի նիստում  
քննվում էր սինոդի ծախքերի նախահաշիվը: Հենց այդ նիստում  
յերույթ ունեցավ սոցիալ-դեմոկրատ (բոլշևիկ) պատգամավոր  
Պ. Ի. Սուրկովը: Իր ճառում նա յեկեղեցին բնութագրեց վորպես  
ինքնակալության պատվար և արձանագրեց յեկեղեցու կապը սե-  
հարյուրյակային կազմակերպությունների հետ: «Յեկեղեցու հայ-  
րեր Իլիոզորները, Վոստորգովները և այլն, վորոնց թիվը լեզիոն  
և, ասում էր Սուրկովը, թե իրենց խոսքով և թե իրենց լու-  
թյամբ սրբագործել են սապնած պարանը, քնդակահարություն-  
ները, կառավարանները, կախաղանները, դահիճներին»: Սինոդի  
նախահաշիվի մասին խոսելով՝ Սուրկովը հատուկ ուշադրություն  
նվիրեց հոգևորականության վերնախավի պահպանման համար և

ցիայի շարքերը, ինչպես և բանվորական վորոշ շրջան-  
ներ: Սոցիալ-դեմոկրատիան անշուշտ պարտավոր է  
հանդես գալ՝ արտահայտելով իր վերաբերմունքը կրո-  
նի նկատմամբ:

Սոցիալ-դեմոկրատիան իր ամբողջ աշխարհայացքը  
դիտական սոցիալիզմի, այսինքն՝ մարքսիզմի վրա յե-  
կառուցում: Մարքսիզմի փիլիսոփայական հիմքը, ինչ-  
պես հաճախ Մարքսն ու Ենգելսն եյին հայտարարու-  
յանդիսանում և դիալեկտիկական մատերիալիզմը, մաի  
միանդամայն յուրացրել է XVIII դարի՝ Փրանսակառ-  
մատերիալիզմի և Ֆոյերբախի (XIX դարի առաջին  
կեսը)՝ գերմանական մատերիալիզմի պատմական տրա-  
դիցիաները, այսինքն՝ մի մատերիալիզմի, վորն ան-  
շուշտ աթեիստական է և ամեն տեսակ կրոնի վճռա-  
կան թշնամի: Հիշենք, վոր Ենգելսի ամբողջ «Անտի-  
Դյուրինգը», վորի ձեռագիրը կարդացել է Մարքսը,  
մերկացնում է մատերիալիստ ու աթեիստ Դյուրինգին  
իր մատերիալիզմի անկայունության մեջ, իր կողմից  
կրոնի ու կրոնական փիլիսոփայության համար սո-  
ղանցքներ թողնելու մեջ: Հիշենք, վոր Լուգվիզ Ֆոյեր-  
բախի մասին գրած իր աշխատության մեջ Ենգելսը


այսպես կոչված «հոգևոր» լուսավորության համար կատարվող  
ծախքերի քննարկմանը: Ընդվորում նա կոչ էր անում միջոցներ  
չապա ժողովրդի վոխերիմ թշնամիներին, վորոնք մթափում են  
ժողովրդի գիտակցությունը» (տ. Стенографический отчет III  
Государственной думы, II сессия, часть III, стр. 207): Դու-  
ռայի Փրակցիայում Սուրկովի ճառի նախագծի քննարկման մա-  
սին տեղեկություններ տ. «Прения в думской социал-демокра-  
тической фракции по вопросу об отношении социал-демо-  
кратии к религии» հոդվածում, վորը տպագրվել է «Пролета-  
рий»-ի 1909 թ. մայիսի 26 (13)-ի № 45-ում «Из вартин» բաժ-  
նում:

կշտամբում է նրան, վոր նա կրոնի դեմ պայքարել է վնչ թե հանուն կրոնի վոչնչացման, այլ այն նորոգե-  
լու, նոր, «վերամբարձ» կրոն ստեղծելու և այլն: Կրոնը  
ժողովրդի համար ոպիում է,—Մարքսի այս ասույթը  
կրոնի հարցում մարքսիզմի ամբողջ աշխարհայացքի  
անկյունաքարն է: Ժամանակակից բոլոր կրոններն ու-  
յեկեղեցիները, բոլոր և ամեն տեսակի կրոնական կազ-  
մակերպությունները մարքսիզմը միշտ ել քննարկում  
է իբրև բուրժուական օնակցիայի օրգաններ, վորոնք  
բանվոր դասակարգի շահագործման պաշտպանության  
և թմրեցման են սպասարկում:

Սակայն, միաժամանակ, Ենգելսը հաճախ դատա-  
պարտում եր այն մարդկանց փորձերը, վորոնք ուզում  
էյին սոցիալ-դեմոկրատիայից «ձախ» կամ «ավելի հե-  
ղափոխական» լինել, կրոնին կռիվ հայտարելու իմաս-  
տով՝ բանվորական կուսակցության ծրագրի մեջ ուղ-  
ղակի ակթելով մտցնել 1874 թ., խոսելով Կոմունայի  
վորպես վտարանդիներ Լոնդոնում ապրող փախստա-  
կանների, բլանկիստների հոչակավոր մանիֆեստի մա-  
սին, Ենգելսը կրոնին կռիվ հայտարարելու մասին  
նրանց արած աղմկալի ազդարարությունը բացատրում  
է իբրև նրանց հիմարություն, հայտարարելով, թե  
պատերազմ հայտարարելու այս ձևը կրոնի հանդեպ  
ունեցած հետաքրքրությունն աշխուժացնելու և կրոնի  
իսկական մահացումը դժվարացնելու լավագույն մի-  
ջոցն է: Ենգելսը բլանկիստներին մեղադրում է, վոր  
նրանք չեն կարողացել հասկանալ թե պրոլետարիատի  
ամենայլայն խավերը գիտակից ու հեղափոխական հա-  
սարակական պրակտիկայի մեջ բազմակողմանիորեն ներ-  
գրավելու միջոցով է միայն, վոր բանվորական մաս-  
սաների դասակարգային պայքարն ի վիճակի կլինի

ազատագրելու ճնշված մասսաներին կրոնի ճնշումից,  
մինչդեռ բանվորական կուսակցության կողմից կրո-  
նին կռիվ հայտարարելու գործը քաղաքական խնդիր  
ազդարարելն անարխիստական Ֆրազ է: Յեկ 1877  
թվականին «Անտի-Ռյուրինգում» անողոք կերպով խա-  
րազանելով փրկիստիա Ռյուրինգի ամենաչնչին ղեկում-  
ներն իդեալիզմին ու կրոնին, Ենգելսը վոչ պակաս  
վճռականությամբ դատապարտում է սոցիալիստական  
հասարակարգում կրոնն արգելելու մասին Ռյուրին-  
գի ունեցած իբր թե հեղափոխական զաղափարը: Կրո-  
նին այսպիսի պատերազմ հայտարարել՝ նշանակում  
է,—ասում է Ենգելսը,—«հենց իրենից Բիսմարկից անց-  
նել, այսինքն՝ կրկնել կղերականների դեմ մղվող բիս-  
մարկյան պայքարի հիմարությունը (չարաբաստիկ  
«պայքար կուլտուրայի համար», Kulturkampf, այսինքն՝  
1870 թ.թ. կաթոլիկների գերմանական կուսակցության  
գեմ, «կենտրոնի» կուսակցության դեմ մղած Բիսմարկի  
պայքարը կաթոլիկականության դեմ հարուցած վոստի-  
կանական հետապնդումների միջոցով): Նման պայքա-  
րով Բիսմարկը միայն կաթոլիկների մարտնչող կղերա-  
կանությունն ամբողջացրեց, միայն իսկական կուլտու-  
րայի գործին վնասեց, վորովհետև քաղաքական բա-  
ժանումների փոխարեն առաջին տեղը կրոնական բա-  
ժանումներին տվեց, բանվոր դասակարգի ու դեմոկրա-  
տիայի վորոշ խավերի ուշադրությունը դասակարգա-  
յին ու հեղափոխական պայքարի կենսական խնդիր-  
ներից ամենամակերեսային ու բուրժուական կեղծ  
հակակղերականության կողմը դարձրեց: Մեղադրելով  
ժայթակեղ հեղափոխական լինելու ցանկություն ունե-  
ցող Ռյուրինգին, վորը կամենում եր այլ ձևով կրկնել  
Բիսմարկի նույն հիմարությունը, Ենգելսը բանվորական

222  
85



կուսակցութիւնից պահանջում եր համբերատար աշխատելու ունակութիւնն՝ պրոլետարիատին կազմակերպելու և լուսավորելու գործի համար, այն գործի համար, վոր դեպի կրօնի մահացումն է տանում, այլ վոչ թե կրօնի դեմ մղվող քաղաքական կռիւի ավանտյուրանների գերկը նետվել: Այս տեսակետը գերմանական սոցիալ-դեմոկրատիայի մասի ու արյան մեջ է մտել, այն սոցիալ-դեմոկրատիայի, վոր, որինակ, հոգուտ յեզվիտներէ ազատագրման, սրանց Գերմանիա թողնելու, հոգուտ այս կամ այն կրօնի դեմ մղվող վոստիկանական պայքարի ամեն տեսակ միջոցների վոչնչացման և արտահայտվել: «Կրօնը մասնավոր գործ հայտարարելը» — Երֆուրտի ծրագրի (1891 թ.) հայտնի այդ կետն ամբողջացնէ սոցիալ-դեմոկրատիայի վերոհիշյալ քաղաքական տակտիկան:

Այս տակտիկան այժմ արդեն կարողացել է ավանդամուտութիւն դառնալ, կարողացել է մարքսիզմի նոր ազգավազում առաջ բերել դեպի հակառակ կողմը՝ դեպի ոպորտունիզմը: Սկսեցին Երֆուրտի ծրագրի գրույթն այն իմաստով մեկնաբանել, թե մենք, սոցիալ-դեմոկրատներս, մեր կուսակցութիւնը կրօնը մասնավոր գործ է համարում, թե մեզ համար, վորպէս սոցիալ-դեմոկրատների, վորպէս կուսակցութեան համար, կրօնը մասնավոր գործ է: Ուղղակի բանակուլի մեջ չմտնելով ոպորտունիստական այդ տեսակետի հետ, 1890-ական թվականներին Ենգելսն անհրաժեշտ համարեց զճակատանակութեամբ դուրս գալ դրա դեմ վոչ թե բանակուլի ձևով, այլ պոզիտիվ կերպով: Ենգելսը հենց դիտմամբ էլ այս բանը շեշտված հայտարարութեան ձևով արեց, թե սոցիալ-դեմոկրատիան պետքովն ցկատմամբ է կրօնը մասնավոր գործ համարում և ամենևին էլ վոչ

իր նկատմամբ, վոչ մարքսիզմի նկատմամբ, վոչ բանավորական կուսակցութեան նկատմամբ:

Այսպէս է կրօնի հարցի վերաբերմամբ ունեցած Մարքսի և Ենգելսի յելույթների արտաքին պատմութիւնը: Դեպի մարքսիզմն անհոգ վերաբերմունք ունեցող մարդկանց համար, մտածել չգիտցող կամ չցանկացող մարդկանց համար այս պատմութիւնը մարքսիզմի անմիտ հակասութիւնների ու յերբուրեմների մի կծիկ է. «հետևողական» ակտիվիզմի ու կրօնի նկատմամբ արած «դիջոկութիւնների» մի շրջափառ է, իբր, ինչ-վոր «անսկզբունք» տատանում է աստուղ դեմ մղվող հեղ-դ-դափոխական կռիւի և հավատացյալ բանավորների «հաճոյանալու» վախկոտ ցանկութեան, նրանց վախեցնելու յերկյուղի միջև և այլն, և այլն: Անարխիստական Ֆրադյորների գրականութեան մեջ այս վոգով մարքսիզմին հակառակ շատ հարձակումներ կարելի յէ գտնել:

Սակայն ով փոքրիշատե ընդունակ է դեպի մարքսիզմը լուրջ վերաբերմունք ցույց տալու, մարքսիզմի փիլիսոփայական հիմքերի ու միջնագային սոցիալ-դեմոկրատիայի փորձի մեջ թափանցելու, նա հեշտութեամբ կտեսնի, վոր կրօնի նկատմամբ մարքսիզմի տակտիկան խորապէս հետևողական և Մարքսի ու Ենգելսի կողմից մտածված է, թե այն, ինչ վոր դիւտանաներն ու տգետները յերբուրեմներ են համարում, դիւտելիտիկական մատերիալիզմի ուղղակի և անխուսափելի յեղրակացութիւնն է: Խորապէս սխալ կլիներ կարծել, թե կրօնի նկատմամբ մարքսիզմի թվացող «չափավորութիւնն» այսպէս կոչված «տակտիկական» նկատառումներով է բացատրվում «չվախեցնելու» և այլ ցանկութեանների իմաստով: Ընդհակառակը, մարք-

սիզմի քաղաքական գիծն այս հարցում ևս անքակ-  
տելիորեն կապված է իր փիլիսոփայական հիմունքնե-  
րի հետ:

Մարքսիզմը մատերիալիզմ է: Իբրև մատերիալիզմ՝  
մարքսիզմը նույնպես անողոք թշնամի յե կրոնին,  
ինչպես XVIII դարի ենցիկլոպեդիստների մատերիա-  
լիզմը, կամ ինչպես Ֆոյերբախի մատերիալիզմը: Այդ  
անկասկած է: Սակայն Մարքսի և Ենգելսի դիալեկտի-  
կական մատերիալիզմն ենցիկլոպեդիստների ու Ֆոյեր-  
բախի մատերիալիզմից առաջ է անցնում՝ մատերիա-  
լիստական փիլիսոփայությունը կիրառելով պատմու-  
թյան ու հասարակական գիտությունների ասպարե-  
զում: Մենք պետք է պայքարենք կրոնի դեմ: Այս—  
վողջ մատերիալիզմի, հետևապես և մարքսիզմի այբու-  
բենն է: Սակայն մարքսիզմն այբուբենի վրա կանգ ա-  
ռած մատերիալիզմ չէ: Մարքսիզմն ավելի հեռուն է  
գնում: Մարքսիզմն ասում է. պետք է կարգադնալ  
պայքարել կրոնի դեմ, իսկ այդ անելու համար մաս-  
սաների հավատի ու հրոնի աղբյուրը մտերիալիստ-  
բեկ պետք է բացատրել: Կրոնի դեմ մղվող պայքարը  
չի կարելի սահմանափակել վերացական-իդեոլոգիական  
քարոզով, չի կարելի այդպիսի մի քարոզի վերածել  
այն, այս պայքարը պետք է կապակցել դասակարգա-  
յին շարժման կոնկրետ գործնականի հետ, այն շարժ-  
ման, վորի նպատակն է վոչնչացնել կրոնի սոցիալա-  
կան արմատները: Ինչո՞ւ յե կրոնը պահպանվում քա-  
ղաքի պրոլետարիատի հետամնաց խավերի մեջ, կիսա-  
պրոլետարիատի լայն խավերի մեջ, ինչպես նաև գյու-  
ղացիության զանգվածներում: Ժողովրդի տգիտության  
պատճառով, — պատասխանում է բուրժուական պրոգրես-  
սիտը, ազդեկալը, կամ բուրժուական մատերիալիստը:

Հետևաբար՝ կորչի կրոնը, կեցցե ավելիզմը, ավելիստա-  
կան հայացքները ծավալումը մեր գլխավոր անելիքն  
է: Մարքսիստն ասում է՝ ճիշտ չէ: Այդպիսի հայացքը  
մակերեսային է, բուրժուական-սահմանափակ կուլտու-  
րայնություն է (культуричество): Այդպիսի հայացքը  
վոչ բավարար խորությամբ, վոչ մատերիալիստորեն,  
այլ իդեալիստորեն է բացատրում կրոնի արմատները:  
Արդի կապիտալիստական յերկիրներում այդ արմատ-  
ները գլխավորապես սոցիալական են: Աշխատավոր  
մասսաների սոցիալական ճնշվածությունը, նրանց առ-  
յերևութ կատարյալ անոգնականությունը հանդեպ  
կապիտալիզմի կույր ուժերի, այն կապիտալիզմի, վոր  
ամեն որ և ամեն ժամ հաղարպատիկ ավելի ամենա-  
սոսկալի տառապանքներ, ամենավայրագ տանջանք-  
ներ և պատճառում շարքային բանվորներին, քան թե  
արտակարգ ամեն տեսակի պատահարներ, ինչպես,  
որինակ, պատերազմներ, յերկրաշարժեր և այլն, — ահա  
թե վորտեղ է կրոնի արդի ամենախորունկ արմատը:  
«Յերկյուզն է աստվածներ ստեղծել»: Վախը կա-  
պիտալի կույր ուժի հանդեպ, այն ուժի, վոր կույր է,  
վորովհետև ժողովրդի զանգվածների կողմից նախա-  
տեսվել չի կարող, — վորը պրոլետարի ու մանր տնտե-  
սատիրոջ կյանքի ամեն մի քայլափոխում սպառնում  
է նրան «հանկարծահաս», «անակնկալ», «պատահա-  
կան» քայքայման, կորստի, մուրացկանության, պա-  
ուպերի, սյուռնկության, սովամահության դուռը հասց-  
նել և հասցնում է, — ահա արդի կրոնի այն արմատը,  
վոր ամենից առաջ և ամենից ավելի նկատի պետք է  
ունենա մատերիալիստը, յեթե չի ուզում նախապատ-  
րաստական դասարանի մատերիալիստ լինել: Լուսա-  
վորական վոչ մի գրքույկ չի կարող արմատախիլ ա-

նել կրոնը կապիտալիստական տաժանակրությունից ընկճված մասսաների միջից, վորոնք կախված են կապիտալիզմի կույր քայքայիչ ուժերից, քանի ղեռ այդ մասսաներն իրենք չեն սովորել միահամուռ, կազմակերպված, պլանաչափ, գիտակցորեն պայքարել կրոնի այդ տրուսի դեմ, կապիտալի ամեն ձևի սխրտապետությամբ դեմ:

Հետևում է արդյոք սրանից, վոր կրոնի դեմ գրված լուսավորական գրքույկը ֆիասակար է կամ ավելորդ: Վնչ: Սրանից ամենևին էլ այդ չի հետևում: Այս բոլորից հետևում է այն, վոր սոցիալ-դեմոկրատիայի աթեիստական պրոպագանդան պետք է օտորոգուի իր հիմնական անսխիբին—շահագործվող մասսաների դասակարգային պայքարի զարգացմանը՝ հանդեպ շահագործողների:

Ով չի թափանցել դեալեկտիկական մատերիալիզմի հիմունքները, այսինքն՝ Մարքսի և Ենգելսի փիլիսոփայության մեջ, նա այս դրույթը կարող է չհասկանալ (կամ, առնվազն, միանգամից չհասկանալ): Ի՞նչ պես թե, գաղափարային պրոպագանդան, վորոշ գաղափարների քարոզը և հաղարավոր տարիներ գոյություն ունեցող՝ կուլտուրայի ու պրոպերեսի թշնամու (այսինքն՝ կրոնի) դեմ մղվող պայքարը յինթարկել դասակարգային պայքարին, այսինքն՝ տնտեսական ու քաղաքական բնագավառներում վորոշ գործնական նըպատակների համար մղվող պայքարին:

Նման առարկությունը պատկանում է մարքսիզմի դեմ գոյություն ունեցող սովորական առարկությունների թվին, այն առարկությունների, վորոնք Մարքսի դեալեկտիկական միանգամայն չըմբռնելն են վկայում: Այն հակասությունը, վոր վրդովում է նման առար-

կություն անողներին, կենդանի կյանքի կենդանի հակասությունն է, այսինքն՝ դեալեկտիկական, վոչֆրագային, վոչ մտացածին հակասությունը: Բացարձակ, անանցանելի սահմանով աթեիզմի թեորիական պրոպագանդան բաժանելը, այսինքն՝ պրոլետարիատի վորոշ խավերի կրոնական հավատալիքների խորտակումը և այդ խավերի դասակարգային պայքարի հաջողությունը, ընթացքը, պայմանները—նշանակում է դեալեկտիկորեն չդատել, շարժական, հարբերական սահմանագիծը բացարձակ սահմանագիծ դարձնել, նշանակում է՝ բռնի կերպով պոկել այն, վորն անքակտելիորեն կապված է կենդանի իրականության մեջ: Մի որինակ վերցնենք: Տվյալ շրջանի և արդյունաբերությունից ավել ճյուղի պրոլետարիատը բաժանվում է, ասենք թե, բավականին գիտակից ս.~դ. առաջավոր խավի, վորոնք (սոցիալ-դեմոկրատները), իհարկե, անաստվածներ են, և գյուղի ու գյուղացիություն հետ կապված՝ բավականին հետամնաց բանվորների, վորոնք հավատում են աստծուն, յեկեղեցի յեն զնում, կամ նույնիսկ գտնվում են տեղական այն քահանայի անմիջական ազդեցություն տակ, վոր, դիցուք, քրիստոնեյական բանվորական միություն է հիմնել: Ապա ընդունենք, թե տնտեսական պայքարն այդ վայրում գործադուլի հասցրեց: Մարքսիստի համար պարտադիր է գործադուլային շարժման հաջողությունն առաջին տեղը դնել, պարտադիր է վճռականորեն հակադրել այդ պայքարի մեջ բանվորներին անաստվածների ու քրիստոնյաների բաժանելուն, վճռականորեն պայքարել այդպիսի բաժանման դեմ: Աթեիստական քարոզը, այդպիսի հանգամանքներում, կարող է թե ավելորդ և թե ֆիասակար դուրս գալ—վնչ թե հետամնաց խավերին

չխրտնեցնելու, ընտրությունները մանդատը և ուրիշ իրավունքներ կորցնելու՝ քաղքենուն հատուկ նկատառումներն տեսակետից, այլ դասակարգային պայքարի իսկական պրոդրեսի տեսակետից, այն պայքարի, վոր արդի կապիտալիստական հասարակության պայմաններում քրիստոնյա բանվորներին հարյուրապատիկ ավելի լավ կհասցնի սոցիալ-դեմոկրատիային և աթեիզմին, քան լուկ աթեիստական քարոզը: Աթեիզմի քարոզիչն այդպիսի մոմենտում և այդպիսի պայմաններում ռզուս տված կլինի այն տերտերին և տերտերներին, վորոնք վոչ մի բան այնպես չեն ուզում, ինչպես բանվորները՝ ըստ գործազուլին ցույց տված մասնակցության բաժանումը փոխարինել ըստ առաստված ունեցած հավատի բաժանումով: Աստծու դեմ ինչ գնով ուզում է լինի պայքար քարոզելով՝ անարխիստը գործով տերտերներին ու բուրժուազիային ոգնած կլինի (ինչպես և անարխիստներն ամեն ժամանակ գարծով ոգնում են բուրժուազիային): Մարքսիստը մատերիալիստ պետք է լինի, այսինքն՝ կրոնի թշնամի, բայց դիալեկտիկական մատերիալիստ, այսինքն՝ կրոնի դեմ պայքարելու գործը վոչ թե վերացական կերպով, վոչ թե վերացական, զուտ թեորիական, միշտ իրեն հավասար քարոզի հողի վրա դնող, այլ կոնկրետ, իրոք տեղի ունեցող ու մասսաներին ամենից ավելի ու ամենից լավ դաստիարակող դասակարգային պայքարի հողի վրա դնող մատերիալիստ: Մարքսիստը պետք է կարողանա հաշվի առնել ամբողջ կոնկրետ իրադրությունը, միշտ գտնել անարխիզմի և ոպորտունիզմի սահմանագիծը (այս սահմանագիծը հարաբերական է, շարժական, փոփոխական, բայց և այնպես գոյություն ունի), չընկնել վոչ անարխիստի վերացական, լուկ

խոսքով, իրոք դատարկ «հեղափոխականության» և վոչ էլ մանր բուրժուայի կամ ազատամիտ ինտելիգենտի քաղքենիության և ոպորտունիզմի գիրկը, այն ինտելիգենտի, վոր վախենում է կրոնի դեմ պայքարելուց, մոռանում իր այդ անելիքը, հաշտվում է աստծու հավատի հետ, ղեկավարվում է վոչ թե դասակարգային պայքարի շահերով, այլ մանր, չնչին հաշիվներով, այսինքն՝ չվերավորել, չփախցնել, չվախեցնել, իմաստուն կանոնով՝ «ապրիր և թող վոր ուրիշներն էլ ապրեն» և այլն, և այլն:

Վերոհիշյալ տեսակետից պետք է լուծել բոլոր այն մասնակի խնդիրները, վորոնք վերաբերում են կրոնի հանդեպ սոցիալ-դեմոկրատիայի բռնած դիրքին: Որինակ, հաճախ այսպիսի մի հարց է ծագում. կարճը է արդյոք քահանան անգամ լինել սոցիալ-դեմոկրատական կուսակցության, ու սովորաբար, առանց վորեւ առարկությունների, այս հարցին դրական պատասխան են տալիս, հիմնվելով յեվրոպական սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների փորձի վրա: Սակայն այս փորձը վոչ միայն մարքսիզմի ուսմունքը բանվորական շարժման նկատմամբ կիրառելուց է ծնունդ առել, այլև Արևմուտքի պատմական առանձնահատուկ պայմանների շնորհիվ, վորոնք Ռուսաստանում գոյություն չունեն (ստորև կխոսենք այդ պայմանների մասին), այնպես վոր անպայման դրական պատասխանն այստեղ սխալ է: Չի կարելի մի անգամ ընդմիշտ ու ամեն տեսակ հանգամանքների համար հայտարարել, թե քահանաները չեն կարող սոցիալ-դեմոկրատական կուսակցության անդամ լինել, բայց միանգամ ընդմիշտ հակառակ կանոն էլ դնել չի կարելի: Յեթե քահանան մեր կողմն է անցնում միասնական քաղաքական աշխատանքի համար

ու բարեխղճաբար կուսակցական աշխատանք ե կատարում, առանց կուսակցութեան ծրագրերն դեմ դուրս գալու, ապա ուրեմն մենք կարող ենք նրան ընդունել սոցիալ-դեմոկրատիայի շարքերը, վորովհետև մեր ծրագրի վոգու և հիմունքների հակասութեանը քահանայի կրոնական համոզմունքներին՝ այդպիսի պայմաններում միայն իրեն՝ քահանային վերաբերող, իր անձնական հակասութեանը լինել կարող ե, իսկ քննել իր անդամներին՝ իրենց հայացքների ու կուսակցութեան ծրագրի մեջ և հակասութեաններ չլինելու տեսակետից— քաղաքական կազմակերպութեանն այդ անել չի կարող: Բայց, իհարկե, այդպիսի մի դեպք նույնիսկ Յեվրոպայում կարող ե հազվագյուտ բացառութեան լինել, իսկ Ռուսաստանում այդ դեպքն արդեն շատ քիչ ե հավանական: Յեվ յեթե, որինակ, քահանան սոցիալ-դեմոկրատական կուսակցութեան մեջ մտներ և սկսեր այդ կուսակցութեան մեջ, վորպես իր գլխավոր ու միակ աշխատանք, ահա իվ կերպով կրոնական հայացքներ քարոզել, ապա ուրեմն կուսակցութեանն անշուշտ պետք ե նրան հեռացներ իր շարքերից: Բոլոր այն բանվորներին, վորոնք դեռ հավատում են աստծուն, մենք վնչ միայն պետք ե թույլ տանք սոցիալ-դեմոկրատական կուսակցութեան մեջ մտնելու, այլև կրկնապի պետք ե ներգրավենք նրանց, մենք անպայման դեմ ենք նրանց կրոնական համոզումները մազաչափ անգամ վիրավորելուն, բայց մենք նրանց ներգրավում ենք՝ մեր ծրագրի վոգով դաստիարակելու նպատակով, այլ վոչ թե նրա դեմ ահա իվ պայքարելու համար: Մենք կուսակցութեան ներսում կարծիքների ազատութեան թույլատրում ենք, սակայն վորոչ սահմաններում, վորոնք խմբավորման ազատութեամբ են վորոչ-

վում— մենք պարտավոր չենք ձեռ-ձեռի տված դնալու այն ահա իվ քարոզիչներին հետ, վորոնց հայացքները կուսակցութեան մեծամասնութեան կողմից ժխտված են:

Մի ուրիշ որինակ. կարելի՞ յե, արդյոք, բոլոր պայմաններում միատեսակ դատապարտել սոցիալ-դեմոկրատական կուսակցութեան անդամներին այն հայտարարութեան համար, թե՛ «սոցիալիզմն իմ կրոնն ե»<sup>1)</sup>, և այդպիսի մի հայտարարութեան համապատասխանող հայացքներ քարոզելու համար: Վնչ Մարքսիզմից (հետևապես և սոցիալիզմից) նահանջին այստեղ անկասկած ե, սակայն այս նահանջին նշանակութեանը, այսպես ասած՝ նահանջի տեսակարար կշիռը տարբեր պայմաններում տարբեր կարող ե լինել: Այլ բան ե, յերբ ազդեցատուրը կամ բանվոր մասսայի առաջ դուրս յեկողն այսպես ե խոսում, վոր ավելի հասկանալի լինի, վոր իր շարագրանքն սկսի, վոր ավելի ռեալ կերպով

1) Լենինը նկատի ունի Ա. Վ. Լուսնաչարսկու բազմաթիվ յեռույթները 1908—9 թվականներին աստվածաշինարար սոցիալիզմի քարոզով, վորոնց մեջ բազմիցս կրկնվում ե յին տարբեր գուգորդութեամբ այստեղ մեջ բերվող դրույթներն այն մասին, թե «սոցիալիզմը կրոնն ե» և «սոցիալիզմն իմ կրոնն ե»: Այսպես, որինակ, «Կրոնի ապագան» հոգվածում, վորը տպագրվել ե «Образование» ժուռնալի № 10 և 11-ում 1907 թ., Լուսնաչարսկին գրում եր. «Բայց կրոնի այն դիժը, վոր նշել ե Շլայերմախերն,՝ ասելով, թե «կրոնը անհատի կապի զգացմունքն ե գերազույն եյակի հետ»— մեծ չափով ամբանում ե նոր կրոնի մեջ միայն: Այս տեսակետից գիտական սոցիալիզմը բոլոր կրոններից ամենակրոնականն ե և իսկական սոցիալ-դեմոկրատը ամենակրոնասեր մարդն ե» (№ 10, եջ 23): Այս տեսակետները Լուսնաչարսկին ավելի ընդարձակ շարագրել ե «Религия и социализм» գրքի մեջ, վորի առաջին մասը լույս ե տեսել 1908 թ. «Ильинская»-ի հրատարակութեամբ: (Աստվածաշինարարութեան մասին տես № 64 ծանոթագրութեանը):



յերանգավորի իր հայացքներն այնպիսի տերմիններով, վորոնք ամենից ավելի սովորական են անգարգացած մասսայի համար: Այլ բան է, յեթե գրողն «աստվածաշինարարութուն» կամ աստվածաշինարարական սոցիալիզմ է սկսում քարոզել (որինակ, մեր Լուսաշարսկու և Ընկ. Վոզով): Վորքան առաջին դեպքում դատապարտութունը կարող է բժախնդրութուն կամ նույնիսկ ազիտատորի ազատության, «մանկավարժական» ներգործության ազատության անսեղի ձնշում լինել, այնքան յերկրորդ դեպքում կուսակցական դատապարտութունն անհրաժեշտ է ու պարտադիր: «Սոցիալիզմը կրոն է» գրույթը վոմանց համար կրօնից սոցիալիզմին անցնելու, վոմանց համար էլ՝ սոցիալիզմից կրոնին անցնելու ձև է:

Այժմ անցնենք այն պայմաններին, վորոնք Արևմուտքում «կրոնը մասնավոր գործ հայտարարելը» թեղիսի ոպորտունիստական բացատրութուն առաջացրին: Իհարկէ, ընդհանուր պատճառների ազդեցութուն, վորոնք ոպորտունիզմ են ծնում ընդհանրապես—այստեղ կա, վորպէսին է վայրկյանական ոգուտներին բանվորական շարժման արմատական շահերի գոհարերումը: Պրոլետարիատի կուսակցութունը պետօթյունից պահանջում է կրոնը մասնավոր գործ հայտարարել, ամենեւին էլ «մասնավոր գործ» չհամարելով ժողովրդի ոպիւումի դեմ կռվելու, կրոնական սնտոխապաշտության և այլ բաների դեմ կռվելու հարցը: Ոպորտունիստները գործն այնպես են խեղաթյուրում, կարծեք թէ սոցիալ-դեմոկրատական կուսակցութունը կրոնը մասնավոր գործ եւ համարում:

Սակայն, բացի ոպորտունիստական սովորական խեղաթյուրումներից (վորոնք բոլորովին չեն պարզա-

բանված այն վիճարանությունների ժամանակ, վոր կրոնի մասին տեղի ունեցած յելույթը քննարկելիս Դոմայի մեր Ֆրակցիան եր մղում) պատմական առանձին պայմաններ էլ կան, վորոնք, յեթե այսպես կարելի չէ ասել՝ առաջ են բերել յեվրոպական սոցիալ-դեմոկրատիայի այժմյան չափազանց անտարբեր վերաբերմունքը կրոնի հարցի նկատմամբ: Այդ պայմանները յերկու տեսակ են: Նախ՝ պայքարի խնդիրը կրոնի դեմ՝ պատմականորեն հեղափոխական բուրժուազիայի խնդիրն է, և բուրժուական դեմոկրատիան Արևմուտքում այս խնդիրն զգալի չափով իրականացրել է (կամ իրականացնում եր) իւ հեղափոխությունների կամ Ֆեոդալիզմի ու միջնադարականության վրա իր գործ դրած գրոհումների դարաշրջանում: Թէ Յրանսիայում և թէ Գերմանիայում սոցիալիզմից շատ առաջ սկսված (ենցիկլոպեդիստներ, Փոյերբախ) բուրժուական կռվի տրադիցիաներ կան ընդդեմ կրոնի: Ռուսաստանում, բուրժուական դեմոկրատական հեղափոխության պայմանների համեմատ, այս խնդիրն էլ համարյա ամբողջապես ծանրանում է բանվոր դասակարգի ուսերին: Յեվրոպայի համեմատությամբ, մանրբուրժուական (նարողնիկական) դեմոկրատիան այս տեսակետից մեղնում վնչ թէ չափազանց շատ (ինչպես կարծում են նորահայտ սահարյուրյակային կադետները կամ «Вехи»-ից դուրս յեկած կադետական սահարյուրյակայինները), այլ չափազանց քիչ բան է արել:

Մյուս կողմից, բուրժուական կռվի տրադիցիան կրոնի դեմ կարողացավ Յեվրոպայում անարխիզմի միջոցով ստեղծել այդ կռվի բուրժուական յուրահատուկ խեղաթյուրում, անարխիզմ, վոր, ինչպես վաղուց արդեն ու բազմիցս բացատրել են մարքսիստները, բուր-

ժուազիայի վրա հարձակումներ կատարելու իր ամբողջ «կատարութեամբ» հանդերձ կանգնած է բուրժուական աշխարհայացքի վրա: Անարխիստներն ու բրանկիստները ուսմանական յերկիրներում, Մոստը (վորն, ի միջի ալյուր, Իյուրինգի նախկին աշակերտն է յեղել) և Լ'նկ-Գերմանիայում, 80-ական թվականների անարխիստներն Ավստրիայում կրոնի դեմ մղվող պայքարում հեղափոխական ֆրազը nec plus ultra-յի<sup>1)</sup> հասցրին: Չարմանալի չէ, վոր յեվրոպական սոցիալ-դեմոկրատներն այժմ անարխիստների ծուծ փայսը վերածուում են: Այս հասկանալի յե ու վորոջ չափով որինական, բայց մոռանալ Արևմուտքի պատմական առանձնահատուկ պայմանները՝ մեզ, ուս սոցիալ-դեմոկրատներն, վայել չէ:

Յերկրորդ՝ Արևմուտքում ազգային բուրժուական հեղափոխութեաններն ավարտվելուց հետո, դավանանքի շատ թե քիչ լրիվ ազատութեան մտցնելուց հետո, կրոնի դեմ մղվող դեմոկրատական պայքարի խնդիրը սոցիալիզմի դեմ մղվող բուրժուական դեմոկրատիայի պայքարով պատմականորեն այն աստիճան եր արդեն յերկրորդ պլանը քշվել, վոր բուրժուական կառավարութեանները գիտակցաբար փորձում եյին կղերականութեան դեմ quasi-լիբերալ «արշավանք» կազմակերպելով՝ մասսաների ուշադրութեանը սոցիալիզմից շեղել: Այսպիսի բնույթ ունեւ թե Kulturkampf-ը<sup>2)</sup> Գերմանիայում և թե բուրժուական հանրապետականների պայքարը կղերականութեան դեմ՝ Ֆրանսիայում: Բուրժուական հակակղերականութեան, վորպես բանվորական

մասսաների ուշադրութեանը սոցիալիզմից շեղելու միջոց, — ահա թե ինչ եր նախորդում Արևմուտքում սոցիալ-դեմոկրատների մեջ կրոնի դեմ պայքարելու իրենց ժամանակակից «անտարբերութեանը» տարածվելուն: Յեվ դարձյալ այդ հասկանալի յե ու որինական, քանի վոր բուրժուական և բիսմարկական հակակղերականութեանը սոցիալ-դեմոկրատները պետք է հակադրելին կրոնի դեմ մղվող պայքարի յեմբարեւումը սոցիալիզմի համար մղվող պայքարին:

Ռուսաստանում պայմանները բոլորովին այլ են: Պրոլետարիատը մեր բուրժուական-դեմոկրատական հեղափոխութեան առաջնորդն է: Նրա կուսակցութեանը դադարարական առաջնորդը պետք է հանդիսանա ամեն տեսակի միջնադարականութեան դեմ մղվող պայքարում, վորոնց թվում նաև հին, կազյոննի կրոնի դեմ մղվող պայքարում ու կրոնը նորոգելու կամ նորից հիմնավորելու կամ այլ կերպ դնելու բոլոր փորձերի դեմ և այլն: Ուստի, յեթե ենգելսը համեմատաբար մեղմաբար եր ուղղում գերմանական սոցիալ-դեմոկրատներին սպորտունիզմը, վորոնք բանվորական կուսակցութեան պահանջը՝ կրոնը պետք չաւ կողմից մասնավոր գործ հայտարարելու մասին՝ նենգափոխում եյին կրոնն իրենց՝ սոցիալ-դեմոկրատների ու սոցիալ-դեմոկրատական կուսակցութեան համար մասնավոր գործ հայտարարելով, — ապա ուրեմն հասկանալի յե, վոր գերմանական այդ խեղաթյուրման ընդորինակումը ուս ոսորտունիստների կողմից՝ կարժանանար ենգելսի հարյուրապատասիկ ավելի խիստ դատապարտմանը:

Դուժմայի ամբիոնից հայտարարելով, թե կրոնը ժողովրդի ուղիւմն է, մեր ֆրակցիան միանգամայն իրավացի վարվեց և այդպիսով ստեղծեց մի նախադեպ,

1) — մինչև ծայր աստիճան:

2) — պայքար կուսուրայի համար: հմբ:

վոր ուս սոցիալ-դեմոկրատներին հիմք պետք է դառնա կրոնի բոլոր հարցերի առթիվ ունենալիք յելույթների համար: Կարիք կամ արդյոք ել ավելի հեռուն գնալու՝ աթեիստական հետևություններն ել ավելի մանրամասն զարգացնելով: Կարծում ենք, վոր՝ վոչ: Այս բանը կարող է սպառնալ պրոլետարիատի քաղաքական կուսակցութեան կողմից կրոնի դեմ մղվող պայքարի չափազանցումով, այս բանը կարող է հասցնել կրոնի դեմ մղվող բուրժուական ու սոցիալիստական պայքարի միջև գոյութուն զենեցող սահմանագծի ջնջմանը: Առաջին խնդիրը, վոր պետք է իրագործեր սոցիալ-դեմոկրատական ֆրակցիան սենարյուրյակային Դումայում, պատվով գլուխ բերվեց:

Յերկրորդ, — սոցիալ-դեմոկրատիայի համար գրեթե գլխավոր, — խնդիրը, սենարյուրյակային կառավարութեանը և բուրժուազիային բանվոր դասակարգի դեմ մղվող նրա պայքարում պաշտպանելու գործում յեկեղեցու և հոգևորականութեան ունեցած դասակարգային դերը պարզաբանելը — նույնպես պատվով գլուխ բերվեց: Իհարկե, այս թեմայի մասին դեռ շատ բան կարելի չէ ասել, և սոցիալ-դեմոկրատների հաջորդ յելույթները կգտնեն, թե ինչով պետք է լրացնել ընկ. Սուրկովի ճառը, բայց և այնպես նրա ճառը հիանալի յեր ու բոլոր կուսակցական կազմակերպութեաններին կողմից այդ ճառի տարածումը մեր կուսակցութեան անմիջական պարտականութեանն է:

Յերրորդ — պետք էր հանգամանորեն պարզաբանել գերմանական ոպորտունիստների կողմից այնքան հաճախ աղավաղվող «կրոնը մասնավոր գործ հայտարարել» գրույթի նիստ իմաստը: Ընկեր Սուրկովը դժբախտաբար այդ չի արել: Այս բանն առավել ևս ցավալի

յն այն պատճառով, վոր նախորդ գործունեյութեան մեջ ֆրակցիան արդեն թույլ էր ավել այս հարցի առթիվ ընկ. Բելոուսովին կողմից գործված այն սխալը, վոր իր ժամանակին նշել է «Пролетарий» թերթը: Ֆրակցիայում յեղած վիճաբանութեանները ցույց են տալիս, վոր աթեիզմի մասին տեղի ունեցող վիճաբանութեանը ծածկել է ֆրակցիայից՝ կրոնը մասնավոր գործ հայտարարելու վերաբերյալ չարաբաստիկ պահանջը ճիշտ քայտարելու հարցը: Ամբողջ ֆրակցիայի այդ սխալի համար մենք միայն ընկ. Սուրկովին չմեղադրենք: Այդ դեռ քիչ է: Ուղղակի խոստովանենք, վոր այստեղ կամ բողջ կուսակցութեան մեղքը, վոր բավարար չափով չի պարզել այդ հարցը, սոցիալ-դեմոկրատների գիտակցութեան մեջ բավարար չափով չի նախապատրաստել գերմանական ոպորտունիստների հասցեյին Ենգելսի կողմից արված նկատողութեան նշանակութեանը: Ֆրակցիայի վիճաբանութեաններն ապացուցում են, վոր այդ հենց նշանակում է՝ հարցը ճիշտ չհասկանալ և վոչ թե Մարքսի ուսմունքը հաշվի չառնելու ցանկութեան, և մենք համոզված ենք, վոր ֆրակցիայի հետագա յելույթներում այդ սխալը կուղղվի:

Կրկնում ենք, վոր ընդհանուր առմամբ ընկ. Սուրկովի ճառը հիանալի ճառ է և բոլոր կազմակերպութեանները պետք է տարածեն այն: Այս ճառի քըննարկումով ֆրակցիան ապացուցեց, վոր ինքն ամենայն բարեխղճութեամբ կատարել է իր սոցիալ-դեմոկրատական պարտականութեանը: Մնում է ցանկալ այն, վոր ֆրակցիայի ներսում տեղի ունեցող վիճաբանութեաններին մասին կուսակցութեան մամուլի մեջ թղթակցութեաններ ավելի հաճախ յերևան դան՝ ֆրակցիան կուսակցութեանը մոտեցնելու, կուսակցութեանը

Ֆրակցիայի կողմից կատարված ներքին ծանր աշխատանքներին ծանոթացնելու, կուսակցության ու Ֆրակցիայի գործունեություն միջև գաղափարային միասնականություն հաստատելու համար:

«Пролетарий» № 45,  
մայիսի 26 (13) 1909 թ.:

Տղազրվում ե ըստ Յերկերի ուսերեն 3-րդ հրատարակության  
XIV հատորի տեքստի էջ 66 — 76:

## ԴԱՍԱԿԱՐԳԵՐՆ ՈՒ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ- ՆԵՐԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ԴԵՊԻ ԿՐՈՆՆ ՈՒ ՅԵԿԵՂԵՑԻՆ

Մինողի նախահաշվի մասին, այնուհետև, հոգևոր կոչումը թողած անձերի իրավունքները վերադարձնելու մասին և, վերջապես, հնաժխական համայնքների մասին Պետական Դումայում տեղի ունեցած վիճաբանությունները չափազանց ուսանելի նյութ են ուսական քաղաքական կուսակցությունների բնութագրության համար՝ դեպի կրոնն ու յեկեղեցին ունեցած նրանց վերաբերմունքի կողմից: Մի ընդհանուր հայացք գրենք այս նյութի վրա, կանգ առնելով, զլիսավորապես, սինողի նախահաշվի վերաբերյալ վիճաբանությունների վրա (վերը մատնանշված մյուս հարցերի վերաբերյալ վիճաբանությունների մասին սղազրական հաշվետվությունները մենք ղեռնա չենք ստացել):

Առաջին հետևությունը, վոր Դումայի վիճաբանությունները քննության առնելիս առանձնապես աչքի յե ընկնում, այն և, վոր մարանչող կղերականությունը Ռուսաստանում վնչ միայն առկա յե, այլ բացահայտորեն ուժեղանում և ու ել ավելի կազմակերպվում: Միտրոֆան յեպիսկոպոսը ապրիլի 29 (16)-ին հայտարարեց. «դումայական մեր գործունեություն առաջին

քայլերն ուղղված ելին հատկապես դեպի այն, վորպեսզի մենք, ժողովրդական բարձր ընտրութեամբ մեծարվածներս, վորպեսզի այստեղ Դուժալուժ կանգնենք կուսակցական մասնատվածութունից ավելի բարձր և կազմենք հոգևորականութեան մի խումբ, վորը բոլոր հարցերը լուսաբաներ իր ետիկական հայեցակետով» ... «խկ ի՞նչն է պատճառը, վոր մենք չհասանք այդ իդեալական դրութեանը»... «հանցանքը նրանցն է, ովքեր ձեզ հետ միասին» (այսինքն կաղետները ու «ձախերի» հետ) «բաժանում են այս աթոռները, հատկապես, հոգևորականութեան այն պատգամավորները, վորոնք պատկանում են ուղղիցիային: Նրանք առաջինը բարձրացրին իրենց ձայնը և սկսեցին խոսել, թե այդ ավելի բան չէ, քան կղերական կուսակցութեան ծնունդ, և թե այդ վերին աստիճանի անցանկալի չէ: Իհարկե, կարիք չկա խոսելու ուսական ուղղափառ հոգևորականութեան կղերականութեան մասին — մենք յերբեք այդպիսի տենդենցներ չենք ունեցել, և մենք, ցանկանալով առանձին խումբ կազմել, զուտ բարոյական, ետիկական նպատակներ ելինք հետապնդում, իսկ այժմ, պարոնայք, յերբ այնպիսի անհամաձայնութեան հետևանքով, վոր ձախ պատգամավորները մտցրին մեր յեղբայրական միջավայրը, բաժանում և մասնատում առաջ յեկավ, այժմ դուք» (այսինքն կաղետները) «մեզադրում եք մեզ այդ բանի մեջ»:

Միտրոֆան յեպիսկոպոսն իր անգրագետ ձառի մեջ բերնից հետևյալ գաղտնիքը թողրեց. ինչպես տեսնում եք, ձախերը մեղավոր են, վոր դուժալուժ տերտերների մի մասին կասեցրին առանձին «բարոյական» (այս բառն, իհարկե, ավելի հարմար է ժողովրդին խաբելու համար, քան «կղերական» բառը) խումբ կազմելուց:

Գրեթե մի ամիս անց, մայիսի 26 (13)-ին, Յեվլոզի յեպիսկոպոսը Դուժալուժ կարգաց «դուժալական հոգևորականութեան վորոշումը». «դուժալական ուղղափառ հոգևորականութեանն իր ճշող մեծամասնութեամբ գտնում եք»... վոր հանուն «ուղղափառ յեկեղեցու առաջնութեան ու գերիշխող դրութեան» անթուլյատրելի յեն թե քարոզի ազատութեանը հնածեսներին համար, թե հնածխական համայնքների բացման հայտային կարգը, թե հնածխական հոգևոր անձերին քահանայազորմանը անվանելը: Ռուսական տերտերները «զուտ բարոյական հայեցակետը» լիովին մերկացրեց իրեն, վորպես ամենազտագույն կղերականութուն: Դուժալական հոգևորականութեան «ճշող մեծամասնութունը», վորի անունից խոսում եր Յեվլոզի յեպիսկոպոսը, կազմում ելին, հավանորեն, յերբորդ Դուժալի 29 աջ և չափավոր աջ քահանաները, այլև, թերևս, ոկոյաբրիտտ Ց քահանաները: Ուղղիցիայի կողմն անցան, ըստ յերևութին, պրոգրեսսիստների ու խաղաղ նորոգչականների խմբի 4 քահանա և մեկը՝ լեհ-լիտվական խմբից:

Վհրն եր հապա «դուժալական» (պետք է ավելացնել՝ հունիս-յերեքյան) «հոգևորականութեան ճշող մեծամասնութեան զուտ բարոյական, ետիկական հայեցակետը»: Ահա մի քանի քաղվածքներ ձառերից. «Յես միայն ասում եմ, վոր այդ» (այսինքն՝ յեկեղեցական) «բարենորոգումների ձեռներեցութունը պետք է բղխի յեկեղեցու ներսից, և վոչ թե դրսից, վոչ թե պետութեան կողմից և, իհարկե, վոչ ել բյուջետային հանձնաժողովի կողմից: Չե վոր յեկեղեցին աստվածային ու հավիտենական հիմնարկութուն է, նրա որենքներն անխախտելի յեն, իսկ պետական կյանքի

իղեալները, ինչպես հայտնի յե, մշտական փոփոխու-  
թյան են յենթարկուում» (Յեվրոգի յեպիսկ., ապրիլի  
27 (14)-ին): Հոետորը հիշատակում է «պատմական  
տազնապալից մի զուգահեռ». յեկեղեցական գուլքերի  
գրավումը Յեկատերինա II-ի ժամանակ: «Ո՞վ կարող  
է յերաշխավորել, թե բյուջետային հանձնաժողովը,  
վորը ներկա տարում ցանկութուն է հայտնել այդ-  
պիսիները» (յեկեղեցական միջոցները) «յենթարկել  
Պետական Վերահսկողությանը, հետևյալ տարին ցան-  
կութուն չի հայտնի այդպիսիները դենել համապետա-  
կան գանձարանը, իսկ հետո ել դրանց տնորինութունը  
յեկեղեցական իշխանութունից բոլորովին հանձնել  
քաղաքացիական կամ պետական իշխանությանը»...  
«յեկեղեցական կանոններն ասում են, վոր յեթե յե-  
պիսկոպոսին վստահացվել են քրիստոնեյական հոգի-  
ները, ապա առավել ևս պիտի վստահացվեն յեկեղե-  
ցական գուլքերը»... «ներկայումս ձեր առաջ» (Դուժայի  
պատգամավորների առաջ) «կանգնած է ձեր հոգևոր  
մայրը, ուղղափառ սուրբ յեկեղեցին, վնչ միայն վոր-  
պես ժողովրդական ներկայացուցիչների առաջ, այլև  
վորպես իր հոգևոր գավակների առաջ» (Նույն տեղում):

Մեր առջև է զուտ կղերականութունը: Յեկեղեցին  
բարձր է պետութունից, ինչպես հավիտենականն ու  
աստվածայինը բարձր է ժամանակավորից, յերկրայի-  
նից: Յեկեղեցին պետությանը չի ներում յեկեղեցական  
գուլքերի գրավումը: Յեկեղեցին իրեն համար պա-  
հանջում է առաջին տեղը գրավող ու գերիշխող դրու-  
թյուն: Նրա համար Դուժայի պատգամավորները  
վոչ միայն — ավելի ձիշտը՝ վոչ այնքան — ժողովրդա-  
կան ներկայացուցիչներ են, վորքան «հոգևոր գա-  
վակներ»:

Դրանք վնչ թե ֆարաջավոր չինովիկներ են, ինչ-  
պես արտահայտվեց սոց.-դեմ. Սուրկովը, այլ ֆարա-  
ջավոր նոթսեթեր: Յեկեղեցու ֆեոդալական արտո-  
նությունների պաշտպանութուն, միջնադարյան կար-  
գերի բացահայտ պաշտպանութուն — ահա յերբորդ  
Դուժայի հոգևորականության մեծամասնության քա-  
ղաքականության եյութունը: Յեվրոգի յեպիսկոպոսը  
ամենևին ել բացառութուն չէ: Գեպեցկին Նույնպես  
աղաղակում է ընդդեմ «գրավման», վորպես անթույ-  
լատելի «վիրավորանքի» (ապրիլի 27 (14)-ին): Մաշ-  
կելվիչ քահանան ջախջախում է ոկսյաբրիստական այն  
գեկուցումը, վորը ձգտում է «խախտել պատմական ու  
կանոնական այն հիմքերը, վորոնց վրա կանգնել է  
և պետք է կանգնի մեր յեկեղեցական կյանքը», «ոու-  
տական ուղղափառ յեկեղեցու կյանքն ու գործունեյու-  
թյունը կանոնական ուղուց մղել դեպի այն ուղին...,  
վորի վրա... յեկեղեցու իրական իշխանները — յեպիս-  
կոպոսները — առաքյալներից ժառանգած իրենց գրեթե  
բոլոր իրավունքները պարտավորված պիտի լինեն զի-  
ջել աշխարհիկ իշխաններին»... «Սա վոչ մայլ ինչ է,  
յեթե վոչ... վոտնձգութուն ոտարի սեփականության  
դեմ և յեկեղեցու իրավունքների ու նրա ունեցվածքի  
դեմ»... «գեկուցողը մեզ առաջնորդում է դեպի յեկե-  
ղեցական կյանքի կանոնական կարգի խորտակումը,  
նա ցանկանում է ուղղափառ յեկեղեցին, իր բոլոր  
տնտեսական ֆունկցիաներով, ստորադրել Պետական  
Դուժային, մի այնպիսի հիմնարկի, վորը բաղկացած  
է ամենատարբեր տարրերից, մեր պետության մեջ  
թե հանդուրժելի և թե անհանդուրժելի գավանու-  
թյուններից» (ապրիլի 27 (14)-ին):

Ռուսական նարոզնիկներն ու լիբերալները յերկար

իրեալները, ինչպես հայտնի յե, մշտական փոփոխու-  
թյան են յենթարկվում» (Յեվրոզի յեպիսկ., ապրիլի  
27 (14)-ին): Հոետորը հիշատակում է «պատմական  
տազնապալից մի դուզահեռ». յեկեղեցական գուլքերի  
գրավումը Յեկատերինա II-ի ժամանակ: «Ո՞վ կարող  
է յերաշխավորել, թե բյուջետային հանձնաժողովը,  
վորը ներկա տարում ցանկութուն է հայտնել այդ-  
պիսիները» (յեկեղեցական միջոցները) «յենթարկել  
Պետական Վերահսկողությանը, հետևյալ տարին ցան-  
կութուն չի հայտնի այդպիսիները դնել համապետա-  
կան գանձարանը, իսկ հետո ել դրանց տնորինութունը  
յեկեղեցական իշխանութունից բոլորովին հանձնել  
քաղաքացիական կամ պետական իշխանությանը»...  
«յեկեղեցական կանոններն ասում են, վոր յեթե յե-  
պիսկոպոսին վստահացվել են քրիստոնեյական հոգի-  
ները, ապա առավել ևս պիտի վստահացվեն յեկեղե-  
ցական գուլքերը»... «ներկայումս ձեր առաջ» (Դուժայի  
պատգամավորների առաջ) «կանգնած է ձեր հոգևոր  
մայրը, ուղղափառ սուրբ յեկեղեցին, վնչ միայն վոր-  
պես ժողովրդական ներկայացուցիչների առաջ, այլև  
վորպես իր հոգևոր զավակների առաջ» (նույն տեղում):  
Մեր առջև է դուտ կղերականութունը: Յեկեղեցին  
բարձր է պետութունից, ինչպես հավիտենականն ու  
աստվածայինը բարձր է ժամանակավորից, յերկրայի-  
նից: Յեկեղեցին պետությանը չի ներում յեկեղեցական  
գուլքերի գրավումը: Յեկեղեցին իրեն համար պա-  
հանջում է առաջին տեղը գրավող ու գերիշխող դու-  
թյուն: Նրա համար Դուժայի պատգամավորները  
վոչ միայն — ավելի ձիշտը՝ վոչ այնքան — ժողովրդա-  
կան ներկայացուցիչներ են, վորքան «հոգևոր զա-  
վակներ»:

Դրանք վնչ թե Փարաջավոր չինոգնիկներ են, ինչ-  
պես արտահայտվեց սոց. դեմ. Սուրկովը, այլ Փարա-  
ջավոր նորասերեր: Յեկեղեցու Ֆեոդալական արտո-  
նութունների պաշտպանութուն, միջնադարյան կար-  
գերի բացահայտ պաշտպանութուն — ահա յերբորդ  
Դուժայի հոգևորականության մեծամասնության քա-  
ղաքականության ելութունը: Յեվրոզի յեպիսկոպոսը  
ամենևին ել բացառութուն չէ: Գեպեցիին նույնպես  
աղաղակում է ընդդեմ «գրավման», վորպես անթույ-  
լատրելի «վիրավորանքի» (ապրիլի 27 (14)-ին): Մաշ-  
կելիչ քահանան ջախջախում է ոխյաբրիտսախան այն  
գեկուցումը, վորը ձգտում է «խախտել պատմական ու  
կանոնական այն հիմքերը, վորոնց վրա կանգնել է  
և պետք է կանգնի մեր յեկեղեցական կյանքը», «ուու-  
սական ուղղափառ յեկեղեցու կյանքն ու գործունեյու-  
թյունը կանոնական ուղուց մղել դեպի այն ուղին...,  
վորի վրա... յեկեղեցու իրական իշխանները — յեպիս-  
կոպոսները — առաքյալներից ժառանգած իրենց գրեթե  
բոլոր իրավունքները պարտավորված պիտի լինեն դի-  
ջել աշխարհիկ իշխաններին»... «Սա վոչ ճյլ ինչ է,  
յեթե վոչ... վոտնձգութուն ոտարի սեփականության  
դեմ և յեկեղեցու իրավունքների ու նրա ունեցվածքի  
դեմ»... «գեկուցողը մեզ առաջնորդում է դեպի յեկե-  
ղեցական կյանքի կանոնական կարգի խորտակումը,  
նա ցանկանում է ուղղափառ յեկեղեցին, իր բոլոր  
տնտեսական ֆունկցիաներով, ստորադրել Պետական  
Դուժային, մի այնպիսի հիմնարկի, վորը բաղկացած  
է ամենատարբեր տարրերից, մեր պետության մեջ  
թե հանդուրժելի և թե անհանդուրժելի զավանու-  
թյուններից» (ապրիլի 27 (14)-ին):

Ռուսական նաբոգնիկներն ու լիբերալները յերկար

ժամանակ իրենց մխիթարում ելին կամ, ավելի ճիշտը՝ իրենց խաբում ելին այն «Թեորիայով», թե Ռուսաստանում հող չկա մարտնչող կղերականության համար, աշխարհիկ իշխանություն դեմ «յեկեղեցու իշխաններին» վարելիք պայքարի համար և այլն: Նարոզնիկական և լիբերալ զանազան պատրանքների թվում մեր հեղափոխությունը ցրեց նաև այս պատրանքը: Կղերականությունը քողարկված ձևով գոյություն ուներ, քանի դեռ ամբողջովին ու անձեռնմխելիորեն գոյություն ուներ ինքնակալությունը: Վոստիկանություն ու բյուրոկրատիայի ամենագորությունը «հասարակություն» ու ժողովրդի աչքից ծածկում եր դասակարգային պայքարն ընդհանրապես, «ստոր ամբոխի» դեմ «Փարաշավոր ճորտատերերի» մղած պայքարը՝ մասնավորապես: Ճորտատիրական ինքնակալության մեջ հեղափոխական պրոլետարիատի ու գյուղացիություն կողմից բացած առաջին իսկ ձեղքվածքը գաղտնին հայտնի դարձրեց: Հենց վոր պրոլետարիատն ու բուրժուական դեմոկրատիայի առաջավոր սարքերն սկսեցին ոգտվել քաղաքական ազատություն, մասսաների կազմակերպության ազատություն, այդպիսին գրավելով 1905 թ. վերջին, ապա ռեակցիոն դասակարգերն ել ձգվեցին դեպի ինքնուրույն և բացահայտ կազմակերպությունը: Նրանք չեյին կազմակերպվում և անբաժանելի աբսոլուտիզմի որով առանձին ակնառություն հանգես չեյին գալիս վնչ թե նրա համար, վոր թույլ եյին, այլ նրա համար, վոր ուժեղ եյին, — վնչ թե նրա համար, վոր նրանք անընդունակ եյին կազմակերպվելու քաղաքական պայքարի համար, այլ նրա համար, վոր նրանք այն ժամանակ ինքնուրույն դասակարգային կազմակերպության լուրջ

անհրաժեշտություն դեռևս չեյին տեսնում: Նրանք չեյին հավատում ինքնակալության և ճորտատերերի դեմ մասսայական շարժման հնարավորությունը Ռուսաստանում: Նրանք ամբողջովին հույս եյին դնում այն բանի վրա, վոր ամբոխին զսպելու համար մտրակը բավական է: Ինքնակալությունը հասցրած առաջին իսկ վերքերն ստիպեցին սոցիալական այն տարրերին, վորոնք ինքնակալությանն ոգնում եյին և նրա կարիքն զգում, լույս աշխարհ դուրս գալ: Այն մասսաների դեմ, վորոնք ընդունակ եյին ստեղծելու հունվարի 9-ը, 1905 թ. գործադուլային շարժումը և հոկտեմբեր-դեկտեմբերյան հեղափոխությունը, այլևս չի կարելի կովել միմիայն հին մտրակով: Պետք է քաղաքական ինքնուրույն կազմակերպությունների ասպարեղ դուրս գալ. պետք է, վոր միացյալ ադնվականություն Սորհուրդը կազմակերպի սև հարյուրյակներ և ծավալի ամենամոլի դեմագոգիա. պետք է, վոր «յեկեղեցու իշխանները — յեպիսկոպոսները» — ռեակցիոն հեղափոխականությունը կազմակերպեն վորպես մի ինքնուրույն ուժ:

Յերրորդ Դոման և ռուսական հակահեղափոխության յերրորդ-դոմայական ժամանակաշրջանը բնորոշվում են հենց նրանով, վոր ռեակցիոն ուժերի այդ կազմակերպությունը ձեղքեց դուրս յեկավ, սկսեց ծավալվել համադրային մասշտաբով, պահանջեց սև հարյուրյակային-բուրժուական հատուկ «պառլամենտ»: Մարտնչող կղերականություն իրեն ցույց տվեց ակնհայտի կերպով, և ռուսական սոցիալ-դեմոկրատիային բազմիցս վիճակված կլինի այժմ ականատես և մասնակից լինել կղերական բուրժուազիայի և հակակղերական բուրժուազիայի կոնֆլիկտներին: Յեթե



մեր ընդհանուր խնդիրն այն է, վոր ոգնենք պրոլետարիատին համախմբվելու մի առանձին դասակարգի մեջ, վորը կարող լինի զատել իրեն բուրժուական դեմոկրատիայից, ապա այս խնդրի մեջ, վորպես նրա մի մասը, մտնում է պրոպագանդայի ու ագիտացիայի բոլոր միջոցները, այդ թվում նաև դումայական ամբիոնի ոգտագործումը՝ մասսաներին բացատրելու համար սոցիալիստական հակակղերականության տարբերությունը բուրժուական հակակղերականությունից:

Ոկտյաբրիստներն ու կազեմները, վորոնք III Դումայում հանդես ելին գալիս ընդդեմ ծայրահեղ աջերի, ընդդեմ կղերականների ու կառավարության, մեղ համար վերին աստիճանի հեշտացրին այդ խնդիրը, ակնառու կերպով ցույց տալով բուրժուազիայի վերաբերմունքը դեպի յեկեղեցին ու կրոնը: Կազեմները և, այսպես կոչված, պրոգրեսիստների լեզու մամուլն այժմ հատուկ ուշադրություն է դարձնում հնածեսնների հարցին, այն բանին, վոր ոկտյաբրիստները կազեմներին հետ միասին արտահայտվեցին ընդդեմ կառավարության, այն բանին, վոր նրանք թեկուզ և քիչ բանում «կանգնեցին այն ռեֆորմների ուղու վրա», վոր խոստացված էյին հոկտեմբերի 30 (17)-ին: Մեղ անհամեմատ ավելի շատ է հետաքրքրում հարցի սկզբունքային կողմը, այսինքն ընդհանրապես բուրժուազիայի, կիպ մինչև դեմոկրատի կոչման հավակնությունն ունեցող կազեմները, վերաբերմունքը դեպի կրոնն ու յեկեղեցին: Մենք չպիտի թույլ տանք, վոր համեմատաբար մասնավոր մի հարց — գերեշխող յեկեղեցու հետ հնածեսների ընդհարման մասին, հնածեսների հետ կապված և մասամբ նույնիսկ ուղղակի ֆինանսական իմաստով նրանցից կախում ունեցող

ոկտյաբրիստների վարքագծի մասին («ГОЛОС МОСКВЫ»-ն հրատարակվում է, ինչպես ասում են, հնածեսների միջոցներով) — ծածկի բուրժուազիայի՝ վորպես դասակարգի՝ շահերի և քաղաքականության արմատական հարցը:

Նայեցեք կոմս Ուվարովի ըստ իր ուղղության ոկտյաբրիստի, ոկտյաբրիստների ֆրակցիայից դուրս յեկածի ճառին: Սոսելով ս.-դ. Սուբկովից հետո, նա միանգամից հրաժարվում է հարցը դնել սկզբունքային այն հողի վրա, վորի վրա այն դրել էր բանվոր պատգամավորը: Ուվարովը լուկ միայն հարձակվում է սինոդի և որեւ-պրոկուրորի վրա՝ յեկեղեցական վորոշ յեկամուսնների մասին և ծխական գումարների ծախսման մասին Դումային տեղեկություն տալուց հրաժարվելու համար: Նույնպես է դնում հարցը ոկտյաբրիստների պաշտոնական ներկայացուցիչ Կամենսկին (ապրիլի 29 (16)-ին), վորը պահանջում է վերականգնել ծուխը՝ «ուղղափառությունն ամբապնդելու շահերի տեսակետից»: Այս միտքն է զարգացնում այսպես կոչված «ձախ ոկտյաբրիստ» Կապուստինը. «յեթե մենք դիմում ենք ժողովրդական կյանքին, — բացականչում է նա, — գյուղական բնակչության կյանքին, ապա իսկույն, այժմ, մենք տեսնում ենք մի ցավալի յերևույթ — տատանվում է կրոնական կյանքը, տատանվում է բնակչության բարոյական կառուցվածքի միակ մեծագույն հիմքը»... «ինչո՞վ փոխարինել մեղքի հասկացողությունը, ինչո՞վ փոխարինել... խղճի ցուցումը: Չի՞ վոր չի կարող լինել, վոր դա փոխարինվի դասակարգային պայքարի և այս կամ այն դասակարգի իրավունքների հասկացողությամբ: Դա մի ցավալի հասկացողություն է, վորը մտել է մեր

առորյա կենցաղի մեջ: Ահա ուրեմն, այն տեսակետից, վորպեսզի կրոնը, վորպես բարոյականութեան հիմունք, շարունակի գոյութիւն ունենալ, մատչելի լինի ամբողջ բնակչութեանը, պետք է, վորպեսզի այդ կրոնի հաղորդիչներն ոգտվեն պատշաճ հեղինակավորութեամբ»...

Հակահեղափոխական բուրժուազիայի ներկայացուցիչն ուզում է ամրապնդել կրոնը, ամրապնդել կրոնի ազդեցութեանը մասսաների վրա, զգալով այն անբավարարութեանը, հնացածութեանը, նույնիսկ ֆլասք, վոր յեկեղեցու հեղինակութեանը զցոյ «Փարաջավոր չինովնիկները» հասցնում են կառավարող դասակարգերին: Ոկտյաբրիստը կովում է կղերականութեան ծայրահեղութեաններին ու վոստիկանական խնամակալութեան դեմ՝ մասսաների վրա կրոնի ազդեցութեանն ուժեղացնելու համար, ժողովրդին հիմարացնելու թեկուզ միքանի՛ չափազանց կոպիտ, չափազանց հնացած, չափազանց խարխուլ, նպատակին չհասնող միջոցները առավել նուրբ, առավել կատարելագործված միջոցներով փոխարինելու համար: Վոստիկանական կրոնն արդեն անբավարար է մասսաներին հիմարացնելու համար, ամենք մեզ ավելի կուլտուրական, նորոգված, ավելի ճարպիկ, ինքնավար ծխում գործելու ընդունակ կրոն, — անա թե ինչ է պահանջում կապիտալը ինքնակալութեանից:

Յեւ կադետ կարաուլովն ամբողջապես կանգնած է նույն այդ տեսակետի վրա: Այս լիբերալ ունեւգատը (վոր «Народная Воля»-ից եվոլուցիա յե կատարել դեպի աջ կադետները) ազադակում է ընդդեմ «յեկեղեցու ապազգայնացման, սրա տակ հասկանալով ժողովրդական մասսաներին, աշխարհականներին, յեկե-

ղեցական շինարարութեանից հեռացնելը»: Նա «սարսափելի» յե գտնում (տառացիորէն այսպես), վոր մասսաներն «անհավատ են դառնում»: Նա բոլորովին մենշեվիկավարի բզավում է այն մասին, վոր «յեկեղեցու խոշոր ինքնարժեքութեանն... արժեզրկվում է... ի հսկայական ֆլասք վնչ միայն յեկեղեցական գործի, այլև պետական գործի»: Նա «վոսկե բառեր» է անվանում կրոնամով Յեվոզիի զգվելի կեղծավորութեանն այն մասին, թե «յեկեղեցու խնդրը հավիտենական է, անխոփոխելի յե... է, նշանակում է, յեկեղեցին կապել քաղաքականութեան հետ անկարելի յե»: Նա բողոքում է սեհարյուրյակի հետ յեկեղեցու կնքած դաշինքի դեմ հաւուսն այն բաճի, վորպեսզի յեկեղեցին «էլ ավելի մեծ ուժով ու փառքով, քան այժմ, կատարելի մեծ, սուրբ գործը Գրիստոսի—սիրո է ազատութեան վորով»:

Ընկեր Բելուսովը շատ լավ արեց, վոր Դումայի ամբիոնից ծագրանքի յենթարկեց կարաուլովի այդ «լիբիկական» բառերը: Բայց այդպիսի ծագրանքը դեռևս շատ ու շատ անբավարար է: Պետք էր պարզել, — է կարիք կլինի առաջին խսկ հարմար դեպքում Դումայի ամբիոնից պարզելու, — վոր կադետներին տեսակետը միանգամայն նույնն է, ինչ վոր ոկտյաբրիստներին տեսակետը, և արտահայտում է վոչ այլ ինչ, քան յեթե «կուլտուրական» կապիտալի ձգումով կրոնական թմբերով ժողովրդին հիմարացնելը կազմակերպելու յեկեղեցական խաբեյութեան էլ ավելի նուրբ միջոցների ոգնութեամբ, քան այն միջոցները, վոր կիրառում էր հնումն ապրող շարքային ուս «տերտերը»:

Ժողովրդին հողևոր ստրկութեան մեջ պահելու

համար պետք է յեկեղեցու ամենասերտ դաշինքը սև հարյուրյակի հետ, — Պուրիշկեվիչի շրթունքով ասուած եր վայրենի կալվածատերն ու հին դերժիմորդան: Մխավում եք, պարոններ, Կարաուլովի բերնով առարկում է նրանց հակահեղափոխական բուրժուան. դուք այդպիսի միջոցներով ժողովրդին կրոնից միայն վերջնականապես հետ կվանեք: Յեկեք գործենք ավելի խելացիորեն, ավելի խորամանկորեն, ավելի հմտորեն, — հեռացնենք չափազանց հիմար և կոպիտ սևհարյուրյակայինին, կռիվ հայտարարենք «յեկեղեցու ապադաֆանացման» դեմ, դրոշի վրա գրենք Յեվրոպի յեպիսկոպոսի «վոսկե բառերը», թե յեկեղեցին քաղաքակնությունից բարձր է, — գործողության միայն այս ձևով մենք կարող ենք հիմարացնել հետամնաց բանվորների թեկուզ մի մասին և, առանձնապէս, քաղքենիներին ու գյուղացիներին, կարող ենք նորոգված յեկեղեցուն ոգնել կատարելու ժողովրդական մասսաների հոգևոր ստրկության պահպանման իր «մեծ, սուբբ գործը»:

Մեր լիբերալ մամուլը, ընդհուպ մինչև «Речь» լրագիրը, վերջերքս ուժգնորեն նախատում էր Ստրուվեյին և Ընկ., վորպէս «Вехи» ժողովածուի հեղինակներին: Սակայն կ.-դ. կուսակցության պաշտոնական ճառախոսը Պետական Դումայում, Կարաուլովը, գերազանցորեն մերկացրեց այդ կշտամբանքների և Ստրուվեյից ու Ընկ. այդ հրաժարումների ամբողջ զգվելի կեղծավորութունը: Ինչ վոր Կարաուլովի ու Միլյուկովի մաքին է, այն Ստրուվեյի լեզվին է: Լիբերալներն Ստրուվեյին կշտամբում են միմիայն նրա համար, վոր նա անգգուշաբար բերնից թուցրեց ճշմարտությունը, վոր նա չափից դուրս բացեց խաղաթղթերը: Լիբերալները, վոր կշտամբում

են «Вехи»-ին և շարունակում են աջակցել կ.-դ. կուսակցությանը, ամենաանխիղճ ձևով խաբում են ժողովրդին, դատապարտելով անգգուշորեն-անկեղծ խաբը և շարունակելով ամել հենց այն գործը, վորը համապատասխանում է այդ խոսքին:

Դումայում քննարկվող հարցերի առթիվ տեղեւոնեցած վիճաբանությունների ժամանակ տրուղովիկները վարժագործի մասին կարիք կլինի քիչ բան ասելու: Ինչպէս և միշտ, դրսևորվեց տրուղովիկ-գյուղացիների և տրուղովիկ-ինտելիգենտների միջև յեղած ցայտուն տարբերությունը՝ վոչ ի շահ վերջիններիս նրանց մեծ պատրաստակամությամբ հանդերձ՝ հետեւելու կ.-դ.-ին: Գյուղացի Ռոժկովը, ճիշտ է, իր ճառով ցուցաբերեց իր քաղաքական ամբողջ անգիտակցությունը. նա նույնպէս կրկնեց կադետների գոեհկությունը այն առթիվ, վոր ուս ժողովրդի միությունն ոգնում է վոչ թե ամրապնդելու, այլ խորտակելու հավատը, նա չկարողացավ շարագրել վոչ մի ծրագիր: Բայց դրա փոխարեն, յերբ նա սկսեց պարզատորեն պատմել մերկ, չգեղազարդված ճշմարտությունը հոգևորականության ապորինի տուրքերի մասին, տերտերները շորթումները մասին, այն մասին, թե ինչպէս ամուսնության համար փողից բացի պահանջում են «մի շիշ ողի, նախաճաշիկ և մի ֆուստ թեյ, իսկ յեքեմն ել այնպիսի բան են ուզում, վոր ամբիոնից յես նույնիսկ վախենում եմ ասել» (ապրիլի 29 (16)-ին, սղագրական հաշվետգության եջ 2259), — սևհարյուրյակային Դուման չհամբերեց, աջակողմյան աթոռներից լավեց վայրենի վունոց: «Այս ինչ ծաղր է, այս ինչ այլանգակություն է» — աղաղակեցին սևհարյուրյակայինները, զգալով, վոր գեղջկական պարզ ճառը ապորինի տուրքերի մասին,

համար պետք է յեկեղեցու ամենասերտ դաշինքը սև հարյուրյակի հետ, — Պուրիշկեվիչի շրթունքով ասում եր վայրենի կալվածատերն ու հին դերժնորդան: Միավում եք, պարոններ, Կարաուլովի բերնով առարկում է նրանց հակահեղափոխական բուրժուան. դուք այգպիսի միջոցներով ժողովրդին կրոնից միայն վերջնականապես հետ կվանեք: Յեկեք գործենք ավելի խելացիորեն, ավելի խորամանկորեն, ավելի հմտորեն, — հեռացնենք չափազանց հիմար և կոպիտ սևհարյուրյակայինին, կռիվ հայտարարենք «յեկեղեցու ապադ-գայնացման» դեմ, դրոշի վրա գրենք Յեվլոզի յեպիսկոպոսի «վոսկե բառերը», թե յեկեղեցին քաղաքականութունից բարձր է, — գործողության միայն այս ձևով մենք կարող ենք հիմարացնել հետամնաց բանվորների թեկուզ մի մասին և, առանձնապես, քաղքենիներին ու գյուղացիներին, կարող ենք նորոգված յեկեղեցուն ոգնել կատարելու ժողովրդական մասսաների հոգևոր ստրկության պահպանման իր «մեծ, սուբբ գործը»:

Մեր լիբերալ մամուլը, ընդհուպ մինչև «Речь» լրագրերը, վերջերքս ուժգնորեն նախատում եր Ստրուվեյին և Ընկ., վորպես «Вехи» ժողովածուի հեղինակները: Սակայն կ.~դ. կուսակցության պաշտոնական ճառախոսը Պետական Դումայում, Կարաուլովը, գերազանցորեն մերկացրեց այդ կշտամբանքների և Ստրուվեյից ու Ընկ. այդ հրաժարումների ամբողջ զգվելի կեղծավորութունը: Ինչ վոր Կարաուլովի ու Միլյուկովի մտքին է, այն Ստրուվեյի լեզվին է: Լիբերալներն Ստրուվեյին կշտամբում են միլիարդն չնայած, վոր նա անզգուշաբար բերնից թուցրեց ճշմարտութունը, վոր նա չափից դուրս բացեց խաղաթղթերը: Լիբերալները, վոր կշտամբում

են «Вехи»-ին և շարունակում են աջակցել կ.~դ. կուսակցությանը, ամենաանխիղճ ձևով խաբուում են ժողովրդին, դատապարտելով անզգուշորեն-անկեղծ խոսքը և շարունակելով ամեն հենց այն գործը, վորը համապատասխանում է այդ խոսքին:

Դումայում քննարկվող հարցերի առթիվ տեղեկությունքս միճաբանությունների ժամանակ տրուգովիկներին վարքագծի մասին կարիք կլինի քիչ բան ասելու: Ինչպես և միշտ, դրսևորվեց տրուգովիկ-գյուղացիների և տրուգովիկ-ինտելիգենտների միջև յեղած ցայտուն տարբերութունը՝ վոչ ի շահ վերջիններին նրանց մեծ պատրաստակամությամբ հանդերձ՝ հետևելու կ.~դ.~ին: Գյուղացի Ռոժկովը, ճիշտ է, իր ճառով ցուցաբերեց իր քաղաքական ամբողջ անգիտակցութունը. նա նույնպես կրկնեց կադետների գուճկութունը այն առթիվ, վոր ոռուս ժողովրդի միությունն ոգնում է վոչ թե ամբապնդելու, այլ խորտակելու հավատը, նա չկարողացավ շարադրել վոչ մի ծրագիր: Բայց դրա փոխարեն, յերբ նա սկսեց պարզամտորեն պատմել մերկ, չգեղազարգված ճշմարտությունը հոգևորականության ապորինի տուրքերի մասին, տերտերներ շորթումների մասին, այն մասին, թե ինչպես ամուսնության համար փողից բացի պահանջում են «մի շիշ ողի, նախաճաշիկ և մի ֆունտ թեյ, իսկ յերբեմն ել այնպիսի բան են ուզում, վոր ամբիսից յես նույնիսկ վախենում եմ ասել» (ապրիլի 29 (16)-ին, սղագրական հաշվետվության եջ 2259), — սևհարյուրյակային Դուման չհամբերեց, աջակողմյան աթոռներից լավեց վայրենի վոտնոց: «Այս ի՞նչ ծաղր է, այս ի՞նչ այլանդակութուն է» — աղաղակեցին սևհարյուրյակայինները, զգալով, վոր գեղջկական պարզ ճառը ապորինի տուրքերի մասին,

ծիսակատարութիւնները համար սահմանված «սակա-  
գները» շարադրանքով հանդերձ, մասսաներին ավելի  
շատ և հեղափոխականացնում, քան ուղածը թեորիա-  
կան կամ տակախկական հակակրօնական ու հակայե-  
կեղեցական հայտարարութիւնները: Յեւ զուրբերի  
հրոսախումբը, վորը պաշտպանում էր ինքնակալու-  
թյանը III Դուսայում, վախեցրեց իր սպասավորին,  
նախագահ Մեյենդորֆին, և նրան ստիպեց զրկելու  
Ռոժկովին խոսքից (սոցիալ-դեմոկրատները, վորոնց  
միացան միքանի տրուզովիկներ, կ.դ. և այլն, բողոք  
ներկայացրին նախագահի այդ վարմունքի դեմ):

Տրուզովիկ-գյուղացի Ռոժկովի ճառը, չնայելով  
իր արտակարգ տարրականութեանը, հրաշալի կերպով  
ցույց տվեց կազեանների կողմից կրօնը կեղծավորա-  
բար, դիտավորյալ-ոնեակցիոն կերպով պաշտպանելու  
և մոլեթիկի պրեմիտիվ, անգիտակից, հնամուլ կրօնա-  
կանութեան միջև յեղած ամբողջ անդունդը, այն մոլե-  
թիկի, վորը մեջ իր կյանքի պայմանները ծնում են—  
հակառակ իր կամքի և իր գիտակցութիւնից ան-  
կախ—իրօք հեղափոխական զայրույթ ընդդեմ ապո-  
րինի սուրբերի և վճռական պայքարի պատրաստա-  
կամութիւն ընդդեմ միջնադարյան կարգերի: Կազեա-  
նները ներկայացուցիչներն են հակահեղափոխական  
բուրժուազիայի, վորը ցանկանում է նորոգել ու ամ-  
բապնդել կրօնը՝ ընդդեմ ժողովրդի: Ռոժկովիները ներ-  
կայացուցիչներն են հեղափոխական բուրժուական այն  
դեմոկրատիայի, վորը անզարգացած է, անգիտակից,  
ճեծկված, վոչ-ինքնուրույն, բաժան-բաժան յեղած,  
բայց վորն իր մեջ թաղցնում է հեղափոխական կենդ-  
դիայի դեռևս բավական անսպառ պաշարներ՝ կալվա-

ծատերերի, տերտերներ, ինքնակալութեան դեմ մղվող  
պայքարում:

Ինտելիգենտ տրուզովիկ Ռոզանովը շատ ավելի  
պակաս անգիտակցորեն էր մոտենում կազեաններին,  
քան Ռոժկովը: Ռոզանովը կարողացավ ասել յեկեղե-  
ցին պետութիւնից բաժանելու մասին, վորպէս «ձա-  
խերը» պահանջի, բայց նա իրեն չգտնեց ռեակցիոն,  
մեղանական ֆրազներից՝ «ընտրական որևէն այն  
ուղղութեամբ փոփոխելու» մասին, «վորպէսզի հոգևո-  
րականութիւնը հեռացված լինի քաղաքական պայ-  
քարին մասնակցելուց»: Հեղափոխականութիւնը, վորն  
ինքն իրեն յերևան է գալիս տիպիկ, միջակ մոլեթիկի  
մոտ, յերբ նա սկսում է ճշմարտութիւնն ասել իր  
կենցաղի մասին, տրուզովիկ-ինտելիգենտի մոտ ան-  
հետանում է, փոխարկվելով տափակ, իսկ յերբեմն ել  
ուղղակի գարշելի ֆրազի: Հարցուրբորդ ու հազարե-  
րորդ անգամ մենք տեսնում ենք հաստատութիւնն  
այն ճշմարտութեան, վոր ռուսական գյուղացիական  
մասսաները պրոլետարիատի հետեից զնալով միայն  
ընդունակ են տապալելու իրենց ճնշող ու խորտակող  
լուծը ճորտատեր-հողատերերի, ֆարաշավոր ճորտա-  
տերերի, ճորտատեր-ինքնակալականները:

Բանվորական կուսակցութեան ու բանվոր դասա-  
կարգի ներկայացուցիչը, ս.դ. Սուրկովը, ամբողջ Դու-  
սայում միակն էր, վոր վիճաբանութիւնները դրեց  
իրօք սկզբունքային բարձրութեան վրա և պարզորեն  
ասաց, թէ պրոլետարիատն ինչպէս է վերաբերվում յե-  
կեղեցուն ու կրօնին, թէ ինչպէս պիտի վերաբերվի նրան  
ամբողջ հետևողական ու կենսունակ դեմոկրատիան:  
«Կրօնը ժողովրդի ոպիռմն է»... «Ժողովրդական փո-  
ղերի վոչ մի գոռ»... Ժողովրդի այդ վոխերիմ թշնա-

միներին, վորոնք մթագնում են ժողովրդի գիտակցությունը», — սոցիալիստի այս ուղիղ, անվախ, բացահայտ մարտական կոչը հնչեց վորպես մարտահրավեր սևհարյուրյակային Դոմային և արձագանգ գտավ միլիոնավոր պրոլետարների մեջ, վորոնք այն կտարածեն մասսաներում, վորոնք կկարողանան, յերբ հասնի ժամանակը, հեղափոխական գործողության վերածել այն:

«Социал-Демократ» № 6, 17 (4) հունիսի 1909 թ.:

Ցպագրվում է ըստ Յերկերի ուստրեն 3-րդ հրատարակության XIV հատ. տեքստի, № 77—84:



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Սոցիալիզմն ու կրոնը . . . . .	5
Բանվորական կուսակցության վերաբերմունքը դեպի կրոնը . . . . .	14
Դասակարգերն ու կուսակցությունները և նրանց վերաբերմունքը դեպի կրոնն ու յեկեղեցին . . . . .	35



Նկատված վրիպակներ

Նշ	Տող	Տպված է	Պետք է լինի
8	12 վ.	որենագրքերի	մեր որենագրքերի
15	6 ն.	207):	2074):
25	2 վ.	ազատամիտ	լիբերալ
34	1 ն.	էջ 66	էջ 68

Գրքի գինը՝

կազմած—60 կ.

անկաղմ—30 կ.

Թարգմ. Ա. Տ.-Մկրտչյան  
 Խմբ. Բ. Ն. Դավթյան  
 Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան  
 Սրբազրիչ Լ. Արովյան  
 Կոնտրոլ սրբ. Յե. Տ.-Մխնաթյան

Գլավիտի լիազոր Ի—4895, հրատ. № 462,  
 Պատվեր № 116. տիրած 10.000  
 Հանձնված է արտադրության 28/VI 1937 թ.  
 Ստորագրված է ապագրելու՝ 26/VIII 1937 թ.  
 ԳԻՆԸ 30 Կ.  
 Հայկուսերատի սպարան, Յերևան, Ալավերդյան № 71

ՀՀ Ազգային գրադարան



NL0185605



9810 80 4

В. И. ЛЕНИН  
СОЦИАЛИЗМ И РЕЛИГИИ  
Армивертоиздат. Ереван, 1937